№ 7 (148) XIV ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1904

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## ՎՐԷԺԻ ՍԵՐՈՒՆԴ

Աչքերը յառած այն մեծանուն լեռներին, որտեղից յեղափոխական լուր և մարտիրոսութեան լուրերն են հնչում, հայը դարձեալ մի անգամ մրմնջաց՝ „Միթէ այս անգամ էլ ապարդիւն պիտի անցնի յորդառատ արիւնը, զոհերի այս երկար շարանը“:

Քաղաքական փոթորկի ընթակայ հայութիւնը այդ հարցումը արդէն մի քանի անգամ է կրկնել իր ազատագրական պատմութեան կարճատև շրջանում. — 1894-ին, երբ հերոսական Տալւորիկը առաջին անգամ ժողովրդական աչքերի հիացման առարկան եղաւ. 1895-ին, երբ ստրկութեան փոշին թօթափող ժողովուրդը՝ գետերի չափ առատ արիւն նուեց բռնապետի սուրին. 1895-ին, երբ ապստամբ Զէյթունի կատարներին լեռնականների ձեռքով ազատութեան դրօշն էր ծածանում, և դրանից յետոյ այն խնկելի օրերին, երբ վրէժի կոչը փոքր-ասիական ազատագրութեան էջերի մէջ քանդակեց այն անմոռանալի փաստերն, որոնք Բանկ-Օտոմանից և Խանասորից սկսած մինչև այսօրուայ Սասունը՝ հայկական յեղափոխութեան արիւնլուայ ճակատի անթառամ դափնիներն են կազմում:

„Միթէ՞ այս անգամ էլ“...

Նոյնն է հարցը, ճնշող ու ճակատագրական ըստ ձևին, բայց տարբեր շրջապատող հանգամանքների տեսակէտից, տարբեր իր վշտի և յոյսերի քանակով:

Տասը տարի առաջ, ինչպէս և այն տխրալի օրերին, երբ հայը ապստամբի փոխարէն մորթուողի դերին միայն արժանացաւ, այդ հարցը յուսահատական էր և նոյնիսկ հոմանիշ քաղաքական մահւան: Անորոշ խմորհութեան այն մռայլ օրերին, Սուլթանական եաթաղանը գտաւ՝ հայկական երկրի համարեա բոլոր անկիւններում կախուած պարանոցներ՝ յարմար կտրելու համար, և ստրկական շղթաներին՝ պատրաստ ներբողներ կարդալու սրտածութեան և նրա անզուգական հեղինակին: Եւ արեան երկրից դուրս, բոլոր այն վայրերում, ուր իրաւունք կար միմիայն ցասման և բողոքի որոտ լսելու, ամօթալի ազդողութեամբ իր համար լայն ճանապարհ էր գտնում այն տափակամիտ, չարագուշակ բուին վայել կանչը՝ որ ամբողջ մեղքը ձգում էր յեղափոխութեան վրայ, ազատութեան անդադրող քարոզիչների շլինքին...

Կռիւ չէր այն, այլ կոտորած:

Բողոք չէր այն, այլ արտասուք:

Այժմ, տասնեակ տարիների անցումից յետոյ — [illegible] ժամանակամիջոց ազատութեան յաղթանակի համար — նոյնիսկ այն տխուր փաստի ժխտմամբ, որ թշնամին շարունակում է գիւղերը քանդել ու տաճարները գերեզմանոց դարձնել, յուսահատութեան փոխարէն՝ մտածողին ներկայանում է մի հեռանկար, որ իր մէջ վերջնական յաղթանակի ակնկալելի սաղմն է կրում:

Չկայ այլևս մորթուողների լեգէոնը: Պատրաստի պարանոցի փոխարէն՝ օդի մէջ նկարւում են ապառնական բռունցքներ, դաշոյն ու մօսիններ: Ուղերձներին յաջորդել են բողոքագրերը: Հաւատարմութեան երդմնագրեր տուող էֆէնտիութեան գլխին շողում է տէռորի դաշոյնը: Գեղջկական ծածկոցների տակ սաղմոսների փոխարէն՝ ռազմի երգեր են հնչում: Հայը այլևս մորթուող չէ, այլ կռուող և արտասուողի փոխարէն՝ բողոքող: Եւ մարտի ալիքները խփում են հեռուն ու հեռուն...

Այդ երևոյթը — ընդունելով որ դա փաստ է — պիտի համարել հսկայական առաջադիմութիւն հայկական կռուի պատմութեան մէջ, կատարուած համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, և միաժամանակ մեծ մխիթարանք այն՝ նոյնպէս հսկայական՝ զոհերի դիմաց, որ տանջուող ժողովուրդը բերեց ազատութեան գործին, ի մեծ հիացումն և ի մեծ սոսկումն ամբողջ աշխարհի...

Թշնամին ջանք չխնայեց և շարունակում է նուազեցնել հակառակորդի թիւը. նա հրճւանքով է հաշւում այն յօշոտուած դիակները, որոնք թափթփուած են լեռների լանջերին ու ձորերի մէջ և իր յաղթանակի լուսագոյն ապացոյց է կարծում աւերակ գիւղերը, ուր արդէն թագաւորում է գերեզմանական լռութիւնը: Սակայն, այդ կործանիչ կոյր քաղաքականութեան մէջ նա տխմարօրէն չտեսնելու է դնում այն հերոսական դիմադրութիւնը, որ հայ մարտիկները ցոյց են տալիս սուլթանական մեծաթիւ զօրքերին, ինչպէս և այն կենդանարար, սիրտ ու շունչ տուող հոգեբանութիւնը, որ կազմում է հայկական ժողովրդի այսօրուան յատկանիշը, նրա վերջնական յաղթանակի էական սաղմը:

Ժողովրդական այդ հոգեբանութեան մէջ է մեր ուժը: Դա է, որ հաւար է գցել երկրից դուրս, ամբողջ կովկասեան հայութեան մէջ, հակառակ ցարիզմի

ձեռք առած խստագոյն արգելքների. Նրան ենք պարտական այն վսեմ ոգեւորութիւնը, որ դէպի արեան երկիրն է մղում բազմաթիւ խմբեր, որոնք դիւցազնական անձնուիրութեան ապացոյցներ են տալիս Բասենի ձորերում և Զիվինի ամրութիւնների մէջ. Նրանից է բղխում այն „խ ե ն թ ու թ ի ւ ն ը“, որ դէպի կռիւ և դէպի ա զ ա տ ա բ ե ր մահն է տանում հասարակ գեղջուկներին, որոնք ստեղծագործեցին Թշնամու երեւակայութեան մէջ հայ ֆէդայու հմայիչ ու հայ տէռօրիստի սարսեցնող տիպարը...

Փորձութեան տասնեակ տարիների ընթացքում հայը փոքրացաւ թ ւ ո վ, բայց մեծացաւ ո ր ա կ ո վ — թիւը չէ որ յաղթում է, այլ ճշմարիտ տեսակը: Դրա մէջն է գաղտնիքը օսմանեան շարունակական անկման Յունական կղզիների վրայ և Բալկանեան լեռներում: Մօտ քսան միլիոն օսմանցիների դէմ ըմբոստացող յոյն ու բուլղարները Թշնամու քառորդն անգամ չէին կազմում: Ազատութեան կռիւը թւաբանութեան վրայ չէ հիմնւած, այլ ազգերի հ ո գ ե բ ա ն ու թ ե ա ն։

Եւ հայկական „մեծացող սրտի“ մէջ երկու վիթխարի զգացմունք — ազատութեան՝ իբրև վերաշինող ուժ և վրէժի՝ իբրև քանդող զօրութիւն — միմեանց փարած՝ յարատև աճումով անխուսափելիօրէն դէպի յաղթանակ պիտի տանեն այն մեծ ողբերգութիւնը, որ խաղացւում է փոքր-Ասիայի ջրւեղեան շրջանում:

Եւ ներկայ օրերին, միայն ա զ ա տ ու թ ե ա ն կրակը չէ, ինչպէս տասն տարի առաջ, որ վառւում բորբոքում է նահատակ ժողովրդի ծաղիկ-ուժերը, այլ և վ ր է ժ ի զ գ ա ց մ ու ն ք ը — արդարութեան ձայնը բռնութեան երկրում — որ անորակելի ոճիրներից փրփրած, շիկացած՝ շնորհիւ այն սոսկումների, որոնց Թատրոն է այժմ ամբողջ Հայաստանը, դարձել է ամբողջ սերունդների ղեկավար աւետարանը, սրբազան կտակը:

Անմեղների արիւնը անհետեւանք չի անցնի, ինչպէս և աւերակ գիւղերի մռայլ պատկերը: Անպատւած մայրերի դիակների վրայ և կրակի մատնւած տների աշխարհում վ ր ի ժ ա ռ ու սերունդներ են սնւում, պատրաստ անօրինակ ցնցման, ընդունակ նոյնիսկ „ամարդի“ խստութիւնների:

Վրէժի սերունդ:

Դա է անունը ներկայ հայ-մարտիկների, բուսած և պատրաստւած օսմանեան ռեժիմի քուրայի մէջ. Եւ վրէժի հարւածը կը լինի վճռական, անխնայ. գալիք օրերն էլ՝ ս ո ս կ ու մ ի օրեր, ընդունակ յիշեցնելու դահիճներին մահմեդականութեան կլասիկ դարձւածքը՝

„Երերումով երերեց երկիրը,
Սարերը միմեանց մօտ գնացին“:

Վաղ թէ ուշ, կը հասնի այդ սքանչելագործ օրը:

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
### (ՍԵՓԱԿԱՆ)

—

ԿԱՐՍ, 8/21 յունիս

Կայծակի ձիաւոր խումբը, 30 հոգուց բաղկացած, մեծ դժուարութիւններով յաջողեց երկիր մտնել: Նպատակն էր՝ ըստ կարելւոյն խոյս տալ ընդհարումներից, Մուշի դաշտը հասնելու համար: Սակայն այդ նրան չյաջողւեց: Յունիս 6-ի գիշերը, ժամը 12-ին, խումբը նկատւում է սահմանապահ Թիւրք զինւորներից: Սկըսւում է երկու կողմից կատաղի հրացանաձգութիւն: Մերոնք յաջողութեամբ կռւելով, իրենց ձգում են Խ ո ր ու մ կոչւած նպաստաւոր դիրքերը: Մինչև այդտեղ հասնելը՝ գիշերային հրացանաձգութեան միջոցին՝ յայտնի չէ, եղել են արդեօք սպանւածներ: Խորումը գտնւում է ռուսական սահմանից մօտ 3 ժամ հեռաւորութեան վրայ և հռչակաւոր Զ ի վ ի ն ի ամենաանառիկ կէտերից մինն է: Բնական ամրութիւններից զատ՝ կան և արհեստական խրամատներ ու մարտկոցներ, շինւած վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ: Այդ մարտկոցների մէջ է, որ հայ խումբը ամրացած՝ կռւում է յաջողութեամբ մինչև հետևեալ օր կէս օրւայ ժամը 2-ը:

Այստեղ կանգ է առնում մեր սուրհանդակը: Հետևանքները յայտնի չեն: Տեղական մարդիկ մեծ գովեստով են խօսում այդ դիրքերի մասին, նակայն ասում են, որ ջրի պակասութիւնը շատ պիտի նեղէր մերոնց: Խմբի վ ա լ ա ն ն ե ր ը ծրագրել էին՝ 7-ի գիշերը մի կերպ դուրս գալ այդ դիրքերից և անցնել դէպի աւելի ամուր դիրքեր, — մօտակայ Գերեակու լեռները: Յաջողւե՞լ է այդ, թէ ոչ — այդ մասին լուր չունինք: Սպասում ենք անհամբեր:

—

ԹԱՒՐԻԶ, 5 յուլիս
(Հնդաեւրոպական գծով)

Յունիսի 7-ին Բասենի մէջ յայտնւեց Անդրանիկի ընկեր Կ ա յ ծ ա կ ի ձիաւոր խումբը, որը ունեցաւ զօրքերի և քիւրդերի հետ մի խիստ ընդհարում: Ապըստամբները աջող դիրքեր բռնեցին վերջին ռուս-թիւրքական պատերազմի միջոցին հռչակւած Զիվինի բերդի աւերակների մէջ: Կռիւը շարունակւեց մի օր: Հաւաքւեցին 4000-ից աւելի զօրքեր և քրդեր, որոնք մի քանի անգամ փորձեցին գրոհ տալ ու դիրքերը վերցնել, բայց մեծամեծ կորուստներ տալով տեղացող ռումբերից և մօսինի գնդակներից՝ յետ նահանջեցին: Կռիւը յուսահատական դարձաւ իրիկնապահին. մի քանի դիրքերից կատարւած յարձակումները դարձեալ յետ մղւեցին: Թշնամին թողեց դաշտի մէջ բազմաթիւ դիակներ: Ձիաւոր խումբը 25 զոհ տւեց: Մնացածները գիշերային մթութեան շնորհիւ՝ պատռեցին շղթան և անցան: Թշնամու կորուստը հաշււում է 3-400: Սարսափը աննկարագրելի է: Հէնց այժմ լուր հասաւ, որ կենդանի մնացած ապստամբները շարունակում են կռւել:

# «ԴԺՈԽՔ» ՀԵԾԵԼԱԽՄԲԻ ԿՌԻՒԸ ԶԻՎԻՆԻ ԲԱՐՁՐՈՒՆՔՆԵՐՈՒՄ

(կռւի մասնակից զինուորի պատմածը)

7 յունիսի, 1904

Երկիրը երկունքի մէջ էր և օգնութեան էր հրաւիրում իր զգայուն, կրակոտ զաւակներին: Տանջւում էինք բոլորս, լսելով մեր նորեկ ընկերների խիզախ ու արիւնոտ ընդհարումները քուրդ ու տաճիկ բարբարոսների հետ Սասունում, Մուշում, Խութ ու Խիանք գաւառներում. մեզ համար էլ հանգիստ չկար, կեանքը դժոխք էր եղել, կրծած խայթներով լցուել:

Անչափ ուրախութեամբ վառուեց, երբ լսեցինք, որ մեր նախկին ընկեր Կայծակը (Մկրտիչ Բաղդասարեան) հեծելախմբով պէտք է երկիր անցնի, դիմեցինք կազմակերպութեան և ընդունուեցինք «Դժոխք» խմբի մէջ իբրև զինուոր: Մեր ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Ամբողջ խմբի միակ փափագն էր, եթէ հնարաւորութիւն լինի, անցնել մինչև երկրի խորքերը, իսկ եթէ ոչ՝ կռուել հէնց սահմանում, հէնց ժողովրդի այն դահիճների դէմ, որոնք Փէդոյի ուժն ու յանդգնութիւնը մի քանի անգամ արդէն չափել ու զգացել են:

Մայիս 31-ին Դ. գիւղում, ամբողջ խումբը, որ 29 ձիաւորներից էր բաղկացած, հաղորդուեց և դրօշակի, սրի ու խաչի վրայ վերջին անգամ երդուեց մինչև արեան վերջին կաթիլը կռուել թշնամու դէմ, միշտ բարձր պահելով հայ յեղափոխական դրօշի պատիւը... Վերջացնելով երեկոյեան ընթրիքը, հրաժեշտի համբոյրներ տուինք մնացող ընկերներին, որոնք այնքա՜ն նախանձում էին մեր բախտին: Այդ գիշեր մի քանի տեղական պատահարներ մեզ ստիպեցին մտնել հայկական Պ. գիւղը և մի քանի օրով յետաձգել խմբի թուրքիա անցնելը: Վերջապէս յունիս 6-ի գիշերը, 29 հոգուց բաղկացած խումբը ռուսական սահմանապահների մօտից անցաւ, առանց նկատուելու, սակայն տաճկականի մօտից անցնելիս՝ նկատուեց թուրք պահապաններից, որոնք «Ո՞վ էք» պոռալով, կրակեցին մեզ վրայ, իսկ մենք մեր մաուզեր ատրճանակներով պատասխանելով՝ առաջ սլացանք ու կորցրինք մեր հետքը: Դեռ չորս ժամ էր մնում մինչև լուսանալը, գիշերով անկարելի էր հասնել այն լեռը, որը նախապէս որոշուած էր իբրև կայան:

Առաջնորդների խորհրդով և խմբապետ Կայծակի կարգադրութեամբ՝ խումբը լուսաբացին բարձրացաւ Խորում և Զիվին գիւղերի մէջտեղը գտնուող պատմական հին բերդի փլատակները և երեք մասի բաժանուած՝ բռնեց ամրոցի և գագաթի դիրքերը: Մի մասը, 13 հոգով, Խաչիկի առաջնորդութեամբ գտնւում էր գագաթի դիրքում, իսկ ներքևի դիրքերում տեղաւորուած էին մեր 16 ընկերները, որոնց պաշտպանութեանն էին թողնուած ձիաները, վրայի բոլոր ռազմամթերքով: Այդ ռազմամթերքից մեզ հետ, վերևում, ունէինք միայն վեց հատ ռումբ և մեր վրայի փամփուշտներն ու հրացաններ-ատրճանակները:

Լուսաբացին լեռան չուրջը գտնուող հովիւները նկատեցին մեզ և հ ա ւ ա ր ձգեցին մօտակայ քրդական գիւղերը: Առաւօտեան ժամը 5-ից սկսած՝ հարիւրներով զինուած քրդեր հաւաքուեցան մեր շուրջը և մեր հանդիպակաց դիրքերը բռնելով, ժամը 6-ից սկսուեց կռիւը: Մինչև կէսօրուայ ժամը 12-ը մօտաւորապէս երկու հազար քուրդ ու թիւրք զինուորներ էին հաւաքուել արդէն մեր շուրջը, բայց և այնպէս չէին յանդգնում առաջ շարժուել. կրակում էին այնքան հեռուից, որ գնդակները նոյնիսկ չէին հասնում մեր դիրքերին: Մեր խմբապետը շարունակ մի դիրքից միւսը անցնելով, սիրտ էր տալիս տղայոց: Ժամը 12-ից յետոյ զօրքերի և խուժանի թիւը կրկնապատկուեց. սիրտ առած՝ նրանք հետզհետէ մօտեցան մեզ և կռիւը տաքացաւ: Այդ ժամանակ խմբապետը մեր դիրքումն էր և այլևս անկարելի էր միւս դիրքը անցնել: Թշնամին կարկուտի պէս գնդակ էր թափում, բայց մենք առանց զուր տալու՝ կռւում էինք և կանգնեցնում թշնամու առաջ ընթացքը: Ժամը 1-ն էր, երբ առաջին անգամ քրդերը մեծ բազմութեամբ միաժամանակ դուրս թռան իրենց դիրքերից և վազեցին դէպի մեզ: Մենք խմբապետի և տասնապետ Խ ա չ ի կ ի — Ն շ ա ն ի (Միքայէլ Ժամակոչեան, ակնեցի) կարգադրութեամբ՝ մեր հրացանների միահամուռ որոտով գետին տապալեցինք յարձակուողների առաջին շարքերից մի քանի տասնեակ հոգի և մնացածները յետ փախչելով՝ նորից մտան քարերի ու բլուրների ետևը:

Նկատելի էր, որ թշնամու բանակում մեծ իրարանցում էր տիրում. ըստ երևոյթին, մեր մօսինները նրանց մէջ առատ հունձ էին անում: Կէս ժամ անցած՝ քիւրդ ու թիւրք զօրքերը միասին, նորից գոռում-գոչիւններով, մեծ բազմութեամբ դուրս թռան իրենց դիրքերից և խիզախօրէն նետուեցին դէպի մեզ: Այս անգամ էլ մեր միահամուռ կրակը յետ մղեց թշնամու բազմութիւնը:

Նոյն միջոցին ներքևի դիրքերում գտնուող մեր ընկերները կատաղութեամբ կռւում էին քիւրդ ու տաճիկների մի այլ բազմութեան դէմ, որոնք նոյնպէս իրանց անյաջող յարձակումներին, բացի զոհեր տալուց, ուրիշ ոչ մի նպատակի չէին հասնում: Մեր դրութիւնը անսահման էր: Եւ իրար խրախուսելով շարունակում էինք կռիւը, երբ յանկարծ նկատեցինք, որ քրդերի մի բազմութիւն, հեռաւոր քարափների տակից սողալով, բաւական մօտեցել է մեզ: Տասնապետ Խաչիկի նետած երկու ռումբերը և մեր գնդակների տարափը բազմաթիւ դիակներ փռեցին գետին, իսկ մնացածները քարափից ցած թափուելով՝ փախուստի դիմեցին:

Կէս օրից յետոյ ժամը 6-ն էր, երբ սաստիկ բազմութեամբ, նորից նոյն քարափների ետևից յարձակում գործեցին մեզ վրայ: Այս անգամ էլ մեր նետած չորս ռումբերը և մօսինի շեշտակի գնդակները աւելի մեծ հարուած տուին թշնամուն: Եւ երբ նա սարսափած, փախուստ էր տալիս մեզնից 60-70 քայլ հեռաւորութեան վրայ, մենք անկարող եղանք զսպել մեր ոգևորութիւնը, միատեղ դուրս թռանք ամուր դիրքերից և ատրճանակներով ու դաշոյններով հասանք փախչողների ետևից. դիակների վրայից անցնելով՝ անխնայ գլորում էինք մեր ձեռքն անցնողին... Բայց յանկարծ նկատեցինք, որ 3-4 հարիւր տաճիկ զինուորներ, աջ թևից հասել էին մեր թողած դիրքերին: Այդտեղ ամրացած՝ նրանք մեր ետևից սկսեցին կարկուտի պէս գնդակ թափել: Պատկերը փոխուեց: Երեք կողմից շրջապատուած էինք զօրք ու քիւրդերով: Նրանց գնդակներից ընկան տասնապետ ԽԱՉԻԿԸ, ԵՂԻԱԶԱՐԸ, ՆԱՑՕՆ, մշեցի ԳԵՒՈՆ, ալէքսանդրապոլցի ԱՐԱՄԸ

եւ ԽԱԶՕՆ. իսկ մենք 6 հոգով խմբապետի կարգադրութեամբ, կռուելով, յետ նահանջեցինք դէպի Ներքեւի գիւղերը: Այդ միջոցին երկու կողքից վիրաւորուելով ընկաւ մեր քաջ խմբապետը, Ջէջօյը, կռուեցէք եւ լուծեցէք մեր ընկերներու վրէժը", գոչելով: Նոյն ժամուն ընկաւ նոյնպէս գինւոր ՎԱՀԱՆԸ (Աղիղ), մշեցի ԲԱՂԴԱՍԱՐԸ, Ալէքսանդրապոլցի ԱՐՇԱԿՆ ու ՄԱՏԹԷՈՍԸ. իսկ ես թեթեւ վիրաւորուելով, գանձակեցի Յակոբի հետ իջայ վարի գիւղերը:

Վարի գիւղերում մեր 16 ընկերները գնդակահարել էին իրենց ձիերի մեծ մասը, իսկ իրենք իջել գիւղերից աւելի ներքեւ դէպի ձորը եւ կռուելով առաջ էին գնացել առանց մի դիակ թողնելու գիւղերում: Թէ այդ 16 ընկերներից ո՞վքեր էին սպանուել եւ ո՞վքեր ազատուել, անհնար էր իմանալ, որովհետեւ մինչեւ արեւի մայր մտնելը, դեռ ես ձորից լսւում էին հրացանաձգութեան ձայներ:

Գանձակեցի Յակոբը, որ ինձ հետ էր, չ'ուզենալով քարերէ ետեւ դիրք բռնած կռուել, հրացանը ձեռին առաջացաւ քրդերի վրայ եւ գարանամուտ քրդերից բռնուեց. իսկ ես մենակ մնացած, շարունակեցի կռուել: Քրդերը գոռում էին, որ անձնատուր լինեմ, բայց մի՞թէ ֆէդայու համար գոյութիւն ունի „անձնատուր լինել" բառը:

Այդ ծանր րոպէին մի միտք յղացաւ իմ գլխում.— հողի մէջ ծածկեցի երկու ռումբ, վրան հաւաքեցի այդ դիրքում մնացած խուրջինների փամփուշտներն ու ուրիշ մթերքները եւ հրացանս բարձրացնելով կանչեցի քրդերին, որ եթէ չխփեն, անձնատուր կը լինեմ, աւելացնելով որ գան հրացանս առնեն: Յիսունի չափ քրդեր ուրախ ու համարձակ դիմեցին դէպի ինձ: Ես վառեցի ռումբերի երկար պատրոյգը եւ գաղտուկ վազեցի հեռուն գտնուող քարի ետեւ թագնուեցայ: Քրդերը հասան ռազմամթերքին եւ մինչդեռ իրար հետ կռուելով խուրջինները իրար ձեռքից քաշքշում էին, ռումբերը պայթեցին եւ փոշին, ծուխն ու մարդկանց դիակները իրար խառնուեցին...

Այդ իրարանցումից օգուտ քաղելով աւելի հեռացայ եւ մի փոսի մէջ հրացանը ձեռիս, մաուզէր ատրճանակ մօտս՝ պատրաստ սպասում էի թշնամու խուզարկուներին: Ու՛չ ոք չեկաւ ինձ մօտ եւ ես թէեւ այդ կողմերին անծանօթ, սակայն սահմանի լեռներին նայելով երկու գիշեր մենակ ճանապարհ շարունակելով, մի հրաշքով կարողացայ անվնաս, զինուած անցնել սահմանը: Մեր շուրջը եւ դիրքերի վրայ փռուած թշնամու դիակների ու վիրաւորների թիւը բաւական մեծ էր. ինձ թւում է, մինչեւ 4-5 հարիւր: Սահմանագլխում լսեցի, որ իմիջի այլոց սպանուել են մի բիմբաշի (Քեօթակի), 2-3 իւզբաշի եւ 2-3 միւլազիմ:

Արդեօ՞ք ուրիշ տղաներ էլ որեւէ հրաշքով ազատուած են թէ ոչ, առայժմ յայտնի չէ: Պէտք է նկատել, սակայն, որ ներքեւի գիւղերում գտնուած 16 ընկերների մէջ կային 2-3 բասենցի լաւ վալատներ եւ քանի որ նրանք գիւղերում ոչ մի դիակ չթողած մտել էին ձորը եւ այնտեղ կռուել, հաւանական է, որ նրանցից ազատւող եւ Բասէնի հայ գիւղերը գնացողներ լինեն: Սահմանը անցնելուց յետոյ, լսեցի, որ մի բասենցի վալատ էլ կռուի ժամանակ թփերի տակ թագնուելով, դարձեալ հրաշքով ազատուել եւ անցել է Կովկաս:

Սահմանագլխի ռուս պաշտօնեաները հեռագրով յայտնել են Կարսի նահանգապետին եւ վերջինս էլ կառավարչապետին՝ „Դժոխք" խմբի ընդհարման մասին, աւելացնելով, որ դրանք Անդրանիկի խմբից են եւ Մուշի դաշտում կռուելուց յետոյ ուզեցել են անցնել Ռուսաստան-Կովկաս: Այդ „մանկական" զառանցանքի վրայ հիմնուած՝ իշխան Գօլիցին կարգադրել է կրկնապատկել խստութիւնները, որպէս զի խռովութիւնը չ'անցնի դէպի Կովկաս:

## ՍԱՍՈՒՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Մուշ, 15 մայիս

Յեղափոխական խմբերու ամէնուրէք դիմադրութեան լուրերը արդէն տարածուած են ձեզ: Գլխիկոր հայդուկներու քաջութեան առջեւ՝ թիւրքաց զօրքը եւ քիւրդ աշիրաթներու հրոսակները իրենց զէնքերը դարձուցին անզէն ու անմեղ ժողովրդի, մինչեւ իսկ երեխայոց եւ կանանց վրայ:

Լեռնէն ստացուած տեղեկութիւնները դառն կերպով կը նկարագրեն բռնութիւնները, որոնց զոհ են Սասունի անպաշտպան կիներն ու երեխաները:

Նախ ըսենք որ, Սասնոյ մէջ 45 հայաբնակ գիւղեր այրւեր, քանդւեր ու փճացեր են: Ահա այդ գիւղերը՝ Կելիէկուզան իր վեց թաղով. Մխիթարը, Հէքէնիկ, Գարիպշահ, Դահօլ, Մերկեր, Խուշարը, Կռահար, Ալիանք, Հրմօի գոմ, որոնց բնակիչներու թիւը 1,800-էն աւելի է: Սեմալ եւ Շէնքը — 2,130 բնակիչ: Աղբի, Գեղաշէն, Ճունշամերկ — 1415 բնակիչ. Քօլ, Տաղըլ, Իրիցունք, Կեարմաւ—1,175 բնակիչ. Հիթենք, Խածծվանք, Խտան, Կելիէմուր 875 բնակիչ. Հեղին, Իշխնձոր, Սարթ, Ընկուզիկ, Արտոնք, Կելիէկէնդման—1,860 բնակիչ. Տալորիկ, Էգուտուն, Փուրխ, Հագմանք—1,030 բնակիչ, Թուահինք, Խըլհովիտ, Հլողենք, Արգխու եւ Միզրէ — 850 բնակիչ. Հոնուտ, Քօրոխը, Սպաղանք, Էշկատ 650 բնակիչ: Յարգի, Զորեր, Քօքավանք եւն 850 բնակիչ: Գումար 12,650 բնակիչ:

Այդքան բնակիչներէն առայժմ ազատուած կ'երեւան միայն 5,500 կիներ, երեխաներ եւ ծերեր ու կարգ մը վիրաւորներ, որոնք հալածական Մուշ հասեր են: Մաս մ'ալ փախստական են եւ զանազան տեղեր ապաստանած կը մնան: Մնացեալները մօտ 2,500 հոգի զոհ են գնացեր սուլթանական բռնի հրամանին:

Ամենէն սոսկալի բռնութիւնները տեղի են ունեցեր Կելիէկուզանի գրաւումէն վերջ Տալւորիկի Կուրշէկի եւ Կեփինի մէջ: Այդ կողմերը ապաստանած եւ ամրացած հայերը՝ որոնք հետներնին ունէին իրենց կանայք եւ երեխաները, չորս կողմէն պաշարուելով՝ յարձակումներու ենթարկուեցին: Բռնութիւններ կատարողներն էին Կելիի եւ Խութոնի վրայէն Մուշէն մեկնած զօրքերու վեց վաշտերը, եւ անոնց հետ 2,000 քրդեր՝ Բուլանըղ գաւառի եւ Իշխընձորի կողմէն. Դիարպէքիրի ութ վաշտ զօրքերը եւ միւս կողմէն ալ՝ զիլանցի չէյխ Ահմէդը (զիլանցի չէյխ Մահմէդի տղան, որ 1894-ին Սասունի մէջ յայտնի եղաւ իր արիւնարբու գործերով) 5000-ի չափ սասունցի, ջալալցի, բագրանցի, չէյխ-դուրանցի, պատըգանցի, ուչքութանցի աշիրէթներով: Այժմ այդ նոյն բարբարոսը Մուշ է եկած վալիի օգնականի հետ Սասունի 45 գիւղերու հողերը ստանալու պայմանները կնքելու նպատակով: Եւ արդէն քրդերը սկսեր են զետեղուիլ հայ գիւղերու աւերակներու մէջ:

Տալուորիկի մէջ զօրքերն ու քրդերը շատ զօրեղ դիմադրութիւն կը գտնեն և երբ կը տկարանան հայ քաջերու դիմաց՝ Թնդանօթի ուժին կը դիմեն։ Ամբողջ ութ օր, օրական 150-1200 ռումբներ կը թափեն հայերու վրայ եւ չկարողանալով քաջերին վնասել, կիներ, երեխաներ կը ջարդեն՝ խաբէութեամբ ընտանիքներու մի մասը գէթ կ՚իջեցնեն, մանր տղոց սրախողխող ընելէ յետոյ գետը կը լեցնեն, ստորաբար կիները կը բռնաբարեն։ Տասներկու հերոսուհիներ, իրենց պատիւը փրկելու համար՝ իրենց երեխաները գրկած՝ ինքզինքնին ահագին բարձրութենէն ջուրը կը ձգեն. Նոյնպէս մի քանի շէնքցի քաջեր նեղ դրութեան մէջ՝ գահավէժ կ՚ըլլան։ Անհոգի և լքացած զինուորներն անգամ կը զարմանան սասունցի կանանց քաջութեան ու պատուասիրութեան վրայ...

Ինչպէս արդէն գրած եմ ապրիլ 27-էն մինչև օրս Սասնոյ մէջ կռիւը կը շարունակուի։ Չը նայելով որ 30,000-է աւելի զօրք և քիւրդեր կը մասնակցէին Սասունի պաշարման՝ թշնամին ահագին կորուստներ ունեցեր է, ու իր հին սովորութեամբ՝ վրէժը լուծեր է միշտ անպաշտպան կիներէն ու երեխաներէն։ Մինչև այսօր ալ Սասնոյ ձորերու, անտառներու և քարայրներու մէջ մարդիկ կան պահուած, զորս անդադար կը հետապնդեն Թիւրքական գունդերը և ուր որ գտնեն մի անզէն, անմիջապէս գնդակի կը բռնեն, իսկ զինուորներէն երկչոտաբար կը փախչին։

Մայիս 14-ին Տալուորիկի և Կէլիի միջև մի մեծ կռիւ տեղի ունեցաւ և մինչև այսօր կը շարունակուի։ Երկու հարիւրի չափ զինուած քաջեր, հաւաքելով իրենց մօտ անպաշտպան մնացածներուն, տասն օրուան չափ կը պահեն, ամեն մէկին օրական մի բուռ կորեկի ալիւր տալով։ Տարաբախտաբար ուտելիքի պակասութիւնը կըստիպէ դիրքերէն դուրս գալ, երբ ալիւրը կը հատնի, Տալուորիկի գետին վրայ փայտէ կամուրջ մը կը պատրաստեն և երբ 300 ընտանիքների կէսը դէպի Մուշ կ՚անցնի, անմիջապէս կը պաշարուի զօրքերէ և քրդերէ։ Թնդանօթը կ՚ուղղեն երեխաներու և կանանց բազմութեան վրայ... Թիւրքաց կորուստն ևս մեծ է, իրենց տկարութիւնը զգալով մի թապուր զօրք ևս Մուշէն օգնութեան կ՚ուղարկեն։

Այդ ընտանիքներէն միայն 40-50 հոգի վիրաւորներ հասան Մուշ. վիրաւորուածներու մէջ կան տապարի, սուինի և դաշոյնի հարուածներ կրողներ։ Երկու հիւպատոսները անձամբ այցելեցին անոնց. Քաղաք եկածներուն արգիլուած է հայերուն հետ հաղորդակցութիւն ունենալ։ Մերկ, անօթի, խոնաւ գետնի վրայ, հիւանդ և վիրաւոր դրութեան մէջ կը մնան, այնպէս որ օրական 4-5 մեռած կը հանեն այդ „չկլոտէն“։ Ուրախ եմ ըսելու, որ Մշոյ երիտասարդութիւնը և հասարակ ժողովուրդը իրենց բերանի պատառէն, իսկ անոնց բաժին կը հասցնեն՝ չնայած շատ խիստ արգելքներուն։ Եթէ այդ փոքր օգնութիւնն չլինէր, այժմ շատերը գերեզմանի մէջ կը լինէին։

Օգնութեան կարիք կայ։

Իսկ դաշտի մէջ, Հաւատօրիկի և Բերդակի դէպքէն վերջ, քանի մը հեծեալ ջանպէզարներ և զօրքեր կը մտնեն Մկրագոմ գիւղը, անոնց դիմաց կ՚ելնէ գիւղի իշխաններէն Բօղէեան Մխօն և կը հարցնէ՝ „հոս կ՚ուզէք իջնել, թէ կ՚անցնէք“։ Կ՚ըսեն՝ „պիտի իջնենք“։ Նա ալ կըշտապէ անոնց տեղ պատրաստելու. Յանկարծ կրակ կը բացուի, ինն ձի կը զարնուի, զօրքեր և Թիւրքեր դարան կը մտնեն գետի ափը և կըշտապեն օգնութեան կանչելու. Նոյն ժամուն, 15 բոպէ հեռի եղող Խասգիւղէն մի վաշտ զօրք օգնութեան կը հասնի։ Միւս կողմէն ալ, երբ գիւղի բնակիչները ահագին ուժի դիմաց չկրնալ կը քաշուին, քրդեր մեծ բազմութեամբ անոնց ետևէն կը կտրեն և կրակ կուտան։ Դէպքը պատահած օրուան այդ գիւղէն երկու փոքր տղայ ձի նստած՝ մօտակայ գիւղերը լուր կը հաղորդեն։ Նոյն ժամուն Զարեգլթոցի քանի մը զինեալ քաջեր կը հասնին և քրդերու վրայ յարձակելով փախչողներուն կ՚ազատեն։ Կռիւը կըսկսի առաւօտեան ժամը ութին և կը տևէ մինչև գիշերուայ ժամը երկու։ Երբ դիմադրող գիւղացիք և տղայք կը հեռանան, գիւղը կ՚այրեն ու բոլորը թալանի կուտան։

Մուսա բէկի եղբայր Ղասըմ բէկ ևս, որ նոյնպէս լեռնէն վար իջած էր 200 զինեալներով, այդ գիւղին վրայ կ՚երթայ ցորեկ ատեն։ Տաւարը և ոչխարը դաշտէն կը տանեն։ Օտար քրդեր ցորենների հորերը չգիտնալով, միայն յայտնի եղածները տարեր են։

Քրդերը ցուցմունք տուած են (քաղաքական մարմնին ալ վարձած են այդ արիւնարբուները) թէ գիւղի քահանան եղած է այդ խռովութեան պատճառը, յեղափոխականներու հետ շփում ունենալով։ Քրդական ամբաստանութիւնով կառավարութիւնը կ՚ուզէ աւելի հեռու մղել իր աւերածները...

Նոյն գիւղի վիճակին արժանացան Արիզլըռն, Դրմերտ և Չառփոտ գիւղերը։ Այժմ գիւղերը ամայի, բնակիչներ ցրուած, կենդանի մնացածներ այս և այն կողմ կը մուրան, մի մասն ալ բանտարկեալ։ Երկու օր առաջ ջիպրանցի Շապօ անուն քուրդը Տէրըգ (Աշտիշատ) գիւղի վրայ յարձակում գործեց։

Կուսակալը բոլոր գիւղերու ռէսները քաղաք բերած է և շնորհակալութեան հանրագիր ստորագրել կը պահանջէ։ Ի՞նչ դիրք բռնեցին առաջնորդներն և քաղաքական ժողովի անդամները։—Բիթլիզի Եզնիկ և Մշոյ Գնէլ վարդապետները, համամիտ իրենց նման անարժան Կակոսեան Խաչիկին, բիթլիզցի Քէնտէրեան Գրիգորի, Մարտիրոս Սահակեանի և մշեցի Նազարեթ Քէչիչեանի հետ՝ կուսակալի բոլոր պահանջներուն գոհացում կուտան և մինչև իսկ կըստորագրեն այն հանրագիրը, թէ „Յեղափոխականները 30 օր դիմադրելէ յետոյ փախան՝ իրենց ունեցածը թողլով“։

Երկիւղ կրելով հիւպատոսական քննութիւնէն, կուսակալը ամեն ջանք գործ կը դնէ բռնութիւններու հետքերը ջնջելու։ Դիակները ջուրն են ածել տուել։ Նոյնպէս քանդած են Սասունի մէջ շատ գերեզմաններ՝ որպէս զի հիւպատոսական քննութեան ժամանակ մեծ քանակութիւն չ՚երևին։

Հիւպատոսները տակաւին գործնական քայլ չեն առած։ Ռուսիոյ դեսպանին և Թիւրք փաշաներու գալստեան կըսպասեն։

Յեղափոխականները տակաւին Սասնոյ լեռների մէջ պահուած են։ Լուր կայ, որ Խմբապետ Վահան քանի մը օրէն տեղս հասնի։

Լեռ մնացեր է չորս վաշտ զօրք և չորս թնդանօթ. Նոր լուրեր կը հասնին, որ Ֆէդայիներու օգնական խմբեր կուգան դէպի Տարօնի դաշտը։ Մանրամասներ դեռ կան։

## ՀԱՅԱՍԷՐՆԵՐԻ ՄԻՏԻՆԳԸ

Յունիսի 29-ին Լոնդոնի մէջ գումարւած Հայասէրների միտինգը պէտք է համարել մի բերկրալի նշանաւոր այն ցանկալի համերաշխութեան, որ ստեղծւում է ֆրանսիական, անգլիական ու իտալական հասարակութեան և կառավարչական շրջանների մէջ՝ յօգուտ հայկական և մակեդոնական խնդիրների։

Դաշնակցութեան ջանքերը ի մի գումարելու երեք երկրների կարևոր գործողներին մրաւելքի տանջւող ժողովուրդների հարցի շուրջը, — կարելի է համարել աջողութեամբ պսակւած։ Ժողովը ցոյց տւեց օրինակելի ներդաշնակութիւն, թէ բողոքի կողմից, ուղղած Օսմանեան կառավարութեան հասցէին և թէ պահանջի տեսակէտից, դրած եւրոպական դիպլօմատիայի առջև։

Նիստի սկզբում անգլօ-հայկական ընկերութեան նախագահ Սեթընսօն կարդաց զանազան կողմերից ստացւած համակրական նամակները, որոնց թւում Անատօլ Ֆրանսի, Ժան Ժօրէսի և Ժորժ Կլէմանսօյի գրութիւնները, ներշնչւած ջերմ զգացմունքներով։ Ապա Ջեմս Բրայս՝ ժողովի նախագահը, արտասանեց մի յափշտակւած ճառ, նւիրւած Թիւրքիայի քրիստոնեաների սոսկալի վիճակին և վերջացրեց՝ հրաւէր կարդալով արևմտեան Եւրոպայի քաղաքակիրթ ազգերին՝ կատարել իրենց մարդասիրական պարտաւորութիւնը դէպի ճնշւածները։ Ծանօթ հայասէրի խօսքերը ընդունւեցին միահամուռ համակրանքով և բուռն ծափերով։

Ժողովը ընդունեց երեք որոշում։

Առաջին որոշման ներկայացուցիչն էր մեր յարգելի բարեկամ Ֆրանսիս դը Պրէսանսէ, որը արտասանեց մի գեղեցիկ ճառ, իրեն յատուկ հմտութեամբ։ Այդ որոշման աջակցեցին Ջօն Կէննվէյ, Ռօչչեստրի եպիսկոպոս, Մաձձինի, լորդ Ստէնմօր, Գուրտըն, պրօֆէսոր Հարրիս, Կօննէր Պօվուէր, Հեօգ Լօ։ Ահա որոշումը. —

Ժողովը յայտնելով իր ուրախութիւնը այն սրտանց համաձայնութեան համար, որ բարեկամաբար գոյութիւն ունի ֆրանսիական, իտալական և բրիտանական ազգերի միջև, խորին վշտով հաստատում է այն իրողութիւնը, որ Թիւրքական կառավարութիւնը յաւելի կերպով թերացել է գործադրել եւրոպական և ասիական նահանգների մէջ Բեռլինի դաշնագրութեան 23 և 61րդ յօդւածներով ընդունւած վարչական բարենորոգումները. Ժողովը յանձնարարում է Պարիզի, Հռոմի և Լօնդօնի կաբինէտներին՝ անյապաղաբար ազդու միջոցներ ձեռք առնել հաստատելու համար Թիւրքական կայսրութեան բոլոր նահանգներում մի արդար և մարդկային վարչութիւն։

Երկրորդ որոշման առաջարկողներն եղան Հերֆօրտի եպիսկոպոսը և Պիէռ Քիլար, որոնց աջակցեցին Հեռդէրզ Իօբսհօլ, պրօֆէսոր Ջօն Ուէստլէյկ և Մըկ Կօլլ. Նա կազմւած է այսպէս՝

Այս ժողովը համոզւած լինելով, որ Բ. Դրան ցուցւած դիպլօմատիական յանդիմանութիւնները դատարկ են, հրաւիրում է բոլոր ազատ ժողովուրդներին՝ մասնակցելու թիւրք կառավարութեան ներքոյ [illegible] ազատագրութեան գործին, առանց խտրութեան ցեղի և կրօնի, և յայտարարում է, որ իրեն ժողովը որոշել է անել այն ամէնը, ինչ որ կարող է՝ աջակցելու համար այս գործին, շարունակելով մղել պահանջատիրական պայքարը ֆրանսիական, իտալական և անգլիական պարլամենտներում։

Երրորդ որոշումը առաջարկեց սենատոր Դըլպէշ, որին երկրորդեցին Շարլ Շվանն, Հէօպվուտ, Ժան Լօնգէ, Ռեկկէտ, Բէօնմեզ և Վիլլարի։ Որոշումը հետևեալն է.

Ներկայ ժողովը հաւաստելով այն չարաչարութիւնը, որ ծուլութիւնը ազգաց և ցեղերի հպատակների վիճակը բարելաւելու ամէն մի գործի մէջ ցուցաբերած [illegible] յայտարարում է, որ հասել է այն ժամը երբ մեծ պետութիւնները պէտք է պնդեն մտցնելու անհրաժեշտ փոփոխութիւնները օսմանեան կայսրութեան կազմի ու վարչութեան մէջ, նպաստելով օրէնքի ու կարգի պահպանութիւնը յանուն ազգութիւնների բոլոր խմբերի շահերի։

Ժողովի մնացած արձանագրութիւնները պատրաստւած են և շուտով լոյս կը տեսնեն Լօնդօնում անգլիերէն լեզւով. Իսկ «Պրօ Արմէնիայի» խմբագրութիւնը պատրաստում է մի բացառիկ համար նւիրած ժողովի մանրամասներին։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

### ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

7 յունիս

Մայիս 31. — Բիթլիզի ոստիկանապետ Իզէթ պէյ, իր հետ ունենալով 200-ի չափ ոստիկան և ժանդարմ ձիաւորներ, երեկոյեան ժամը 9-ին կը պաշարէ դարձեալ Գոմեր գիւղը՝ Մշոյ դաշտին մէջ։ Կէս ժամ վերջ՝ պաշարման կը մասնակցին 450 զինուորներ ալ՝ մօտակայ կայանքներէն՝ Ջրիկէն, Խըզըլաղաճէն և Ս. Յովհաննու վանքէն։ Կը հանեն նաև արմանցի, պատրկանցի աշիրէթները և անմիջապէս գիւղը հրացանաձգութեան կ'ենթարկեն։

Թիւրքերը լաւ պատրաստ էին թէ, հոն կը գտնւէր Անդրանիկը իր խմբով։ Թիւրքերի յարձակումը յետ կը մղւի զօրեղ դիմադրութեամբ։ Այդ միջոցին գիւղացիներէն կրապաննէի Խօրօ Մկրօյեան անուն անձը ժողովուրդը վտանգը նախատեսնելով՝ կը փախչի. բարեբախտաբար կիներ ու երեխաներ ծառախիտ ձորակէ մը կը յաջողին գիրենք դաշտին գիւղերը ձգել, իսկ տղամարդիկ կը դիմեն դէպի Ջնար ու նոյն միջոցին ամբողջ գիւղացիներէն կը սպանւին՝ ծերունի ռէս Սարգիսը, որդին Մուշեղ, եղբայրը Տօնէն, Պետրոսի որդին Խզօմ, Տ. Խաչատուրի եղբայր Օհան, անոր երեք ամեայ որդին Խոսրով։ Անոնց դիակները երկնքի տակ արևի առջև կը մնան. կէս գիշերի մօտ՝ զօրքերը ու քիւրդերը գիւղը կը խուժեն։ Առաջին թալանէն մնացածները դարձեալ կը յափշտակեն և բոլոր ստուարն ու ոչխարը առնելով կ'առնեն, տները կը վառեն և գիւղը ամայի կը մնայ։

Յունիս 1. — Ոստիկանապետը կ'արշաւէ Կոմերէն վեր Ցարագոմ անուն գիւղին վրայ։ Գիւղը բոլորովին կը կողոպտէ և բնակիչները կը փախչին [illegible] Ս. Յովհաննու վանքին պարտէզին ներքև ծառերու տակ կը պահւին։ Անոնց անուններն են՝ Մըկէ Թամոյեան, Խաչիկ Սափօյեան, Սեփան Օհանեան։

Երկու ժամ վերջ Թիւրքերը բազմութեամբ կ'իջնեն Պէկլ գիւղ. որուն հայ բնակիչները փախած էին։ Գիւղը ամբողջ տներով կը կողոպտւի և բոլոր կենդանիները աւարի կը տրւի։ Նոյն օրը, ժամը 6-ին [illegible] Խոսրովը գիւղին մէջ Պօղոսի անուն քիւրդը, 5 ընկերներով կը վիրաւորէ չէնթըցի Կարօն և կը սպաննէ չէնըքի ծերունի ռէս [illegible], որու մարմինը [illegible] կը յօշոտւի։ Այս երկուքը [illegible] և [illegible] վերջին դաշտին մէջ նկատւած էին։

Փողոցովլի մէջ Բաչօ անուն հայը, ժամը Դ-ին իր տան մէջ կըսպաննուի փողոցովցի ըսուած պէյերէն։

Յունիս 2.—Ախճանցի Յունան Խանդիկեան անուն հայը նոյն գիւղին մօտ, արտերուն մէջ, կըսպաննուի երեկոյեան ժամը 5-ին սէրմանցի քիւրդերէն։

Յունիս 3.—Առաղի գիւղացիները պատրկանցի և ամլիկցի ըսուած քիւրդերու չարիքներէն զերծ ազատելու համար՝ Մուշ եկած և բողոք մատուցեր են։ Երբոր քաղաքէն իրենց գիւղը կը վերադառնան, քրդաբնակ Մեզրէ գիւղէն անցած ատեն՝ իրիկուան ժամը $11^{1}/_{2}$-ին Առաղի միւտիրի և պատրկանցի քրդերու կողմէ յարձակում կը կրեն. այդ միջոցին կըսպաննուին գիւղապետ Յակոբ, Մխոյեան Գրօն. իսկ Ղուկէ և Արտակեան Օհան անուն անձերն ալ կը վիրաւորուին ու կը կողոպտուին։

Յունիս 5.—Սասնոյ կոտորածէն ազատուող գեղաշէնցի Խուրշուտ և Ցօնէ Դլոյեանները Գեղաշէնի անտառին մէջ իրենց վիրաւոր ազգականը փնտռելու գացած ատեն՝ տակաւին գիւղ չհասած՝ ցորեկ ժամը 8-ին տափրկցի հինգ քիւրդերէ կըսպաննուին և իրենց դիակները կը յօշոտուին։

Յունիս 6.—Առաւօտ ժամը 2-ին, ծանօթ ոստիկանապետը իր հետ ունենալով 120 ձիաւոր ոստիկաններ, վաշտ մը զօրք և բազմաթիւ զինեալ Թիւրքեր ու քրդեր՝ կը յարձակի Մուշէն մէկ ժամ հեռաւորութեամբ Դերբէվանք գիւղին վրայ, պատրուակելով թէ հոն ֆէտայի կայ։ Անմիջապէս գիւղը պաշարելով՝ կրակի տակ կ'առնէ։ Դերբէվանքի մէջ ոչ միայն գիւղի բնակչութիւնը կար, այլ նաև հոն լեցուեր էին մօտակայ անբնակ դարձած Առաղ և Բերդակ գիւղերու բնակիչներն ալ։ Անընդհատ հրացանաձգութեան և գիւղին պաշարուած ըլլալուն վրայ ժողովուրդը շուարած՝ կըսկսի փախչիլ, բայց անցք չի գտնէր և դարձեալ գիւղի տներուն մէջ կ'ապաստանի։ Ահա այդ ատենէն զօրքը, Թիւրքերը և ոստիկանները կըսկսին իրենց բռնութիւնները. ձեռք անցուցած անզէն և անպաշտպան հայերը կը կոտորեն գնդակով, սուրով ու սուինով։ Բարեբախտաբար անգլիական և ֆրանսական հիւպատոսները շուտով հասած, հոն կը հասնի նաև նոյն միջոցին Վանի անգլիական հիւպատոսը, որ Վանէն Մուշ կուգար, ապա թէ ոչ աղէտը աւելի և աւելի քստմնելի պիտի ըլլար։

Ահաւասիկ Դիրբէվանքի մէջ, ինչպէս գիւղին մօտերը արտերու և մարգերու մէջ սպաննուած ու վիրաւոր հայերուն անունները.

Վրդօ և Մեսրոբ Պօղոսեան՝ երկու եղբայրներ, Պըտօ Խաչիկեան սպաննուած. Գրիգոր Նշօյեան վիրաւոր. Պետրոս Արթինեան, Շահնազար և Արշակ Շաթօյեան եղբայրներ, Մխիկ Գրգէեան, Գէորգ Սարգիսեան, Մարտիրոս Մկրտիչեան, Եղիկ Պօղոսեան՝ սպաննուած. Խաչիկ Յովհաննէսեան վիրաւոր (ասոնք դիրբէվանքցիներ են), Մուրատ Արթինեան՝ ալիզուլումցի, Մխիկ Կուլոյեան, Մուշեղ Ֆարօյեան՝ սպաննուած. Իկիթ Պետրոսեան՝ վիրաւոր. Օհան Շահինեան, Կոբէ Մէքօրեան սպաննուած։ Այս վերջինները առաղցիներ են։

Կ'ըսուի թէ հիւպատոսները կծու դիտողութիւններ ուղղեր են տեղւոյս կառավարութեան՝ այսքան անմեղ մարդոց տարաբախտ սպաննութեան համար։

—

## ԳԱՐԱՔԻԼԻՍԷ, 21 մարտ

Տաճիկները կազմակերպել են ենիչերիական մի նոր խումբ, որի կենտրոնը լինելու է Կարին։ Դա էլ, ասում են, արդի սատրապամի ստեղծագործութիւնն է։ Նոր ենիչերիական ալայն (վաշտը) բաղկացած է 600 հոգուց, բոլորն էլ փախստական ու դատապարտուած աւազակ Թիւրքեր, Թաթարներ, չէրքէզներ ու քուրդեր են, որ պատուանշաններով ու շքանշաններով վարձատրուած՝ մտնում են այդ խմբի նուիրական դրօշի տակ — որին Ջան բէզար (կեանքից ձանձրացած) անուն են տալիս։ Մինչև այժմ դրանցից ոմանք գտնւում էին Մուշի ու Բիթլիզի շրջանում, բայց այժմ արդէն կանոնաւորուած ու կազմակերպուած են, ազատ ել ու մուտք պիտի ունենան այս ու այն կողմը, պիտի թափառեն ամեն տեղ և անձեռնմխելիաբար նպաստեն կառավարութեան շահատակութիւններին, պիտի հսկեն հայոց յեղափոխական շարժումներին, հարցաքննեն ու պատժեն ինչպէս իրանք են ցանկանում. Նոքա յանձն են առել և պատրաստութիւններ են տեսնում արշաւելու այլուստ Սասունի վրայ, նրան խսպառ ջնջելու համար. Այդ Ջանբէզարի ալայբէյը իր վրայ է վերցրել յատուկ պարտաւորութիւններ ևս։ — Նա բացարձակ պետք է ֆերմանով հաւաքել մնացորդ ամբողջ բակիաները (տուրքերը)։ Մեծ խմբերով շրջում է այս ու այն կողմը և բանի առնում է ինչ որ ուզում է։

—

## ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԴ, 4 մարտ

Ալաշկերտի գաւառում, գլխաւորապէս ռուս-թիւրքական սահմանագլխին, համիդիէները օրէցօր շատանում են։ Բացի գլխաւոր կենտրոններից—Թօփրագգալէ, Գարաքիլիսէ, Բայազէդ ու Մօսուն՝ ուր վերջերս շինել են առանձին զօրանոց։ Նրանք ցրուած են փոքրիկ աւանների մէջ և ապրում են ժողովրդի տներում—ժողովրդի հաշուին, Եօնչալուն, Մանկասար, Աշաղըղա, Երիցու գիւղ, Յեխնիթափէ, Ֆրանկ Երիցու գիւղը, Խաչմալէկ, Յամատ, Խաչլու, Ջետկան, Մոլասուլէյման, Քեասմուր, Իւչքիլիսէի վանքի գիւղը, Ջուջան, Խոզմլէյուտմախ, Մօսուն և այլն գիւղերը լիք են զօրքերով ու համիդիէներով, 50-70 հոգի, Կամնանասզը 20 հոգի։ Բանի կերպով առնում են ժողովրդից խոտ, կաշ, կարաններ ու ամեն տեսակ յարմարութիւններ, ուտում են գիւղացու հետ հաւասար կամ պահանջում են այսինչ կամ այնինչ կերակուր իրանց համար։ Ամեն մի պահանջ կատարելուց յետոյ գոչում են ինչ որ պատահում է՝ ոչխար, հաւ, հալած իւղ, պանիր և այլն։ Գիւղացիք չեն կարող իրանց ուլացքն կտորտանքն անգամ դուրս թողնել, գողանում են։ Եթէ երբ և իցէ վերադարձնեն էլ, այդ առանց կաշառքի չի լինիլ։

Համիդիականը միայն 60 փարա օրապահիկ է ստանում, այն էլ ոչ ժամանակին, մեծ մասամբ պարտքի, հէնց դրա համար էլ նրանք բացարձակ աւերմունք են անում, ասելով որ՝ „60 փարան ինչիս պիտի բաւականանայ ձիուս ուտելիքին թէ ինձ" Թալանն և գողութեան են դիմում, որպէսզի իրանց համալ մի ձայն լինի։ Կուսակալ են դրան հետ, հայհոյում են կառավարութեան. բայց էլի ամեն մեղքը խեղճ ժողովրդի գլխին է։ Գիւղացին միամտաբար դիմում բողոքում է, բայց ի հարկէ լսող չկայ ու չկայ. Բողոքողները չեն

համարձակում մտնել իրանց գիւղը Համիդիէների վախից օրինակ Ցեղնիթափէի գիւղացիները փախուստ են տւել գիւղից, մնում են Գարաքիլիսէում և կառավարութիւնը ոչինչ էլ չի անում:

Համիդիականները մի ամսւայ ընթացքում Ալաշկերտի գաւառում կատարել են հետևեալ թալանները.

| | | |
|---|---|---|
| Դ ա դ ի գ ի ւ ղ ի ց | 16 | ոչխար, |
| Ց ե խ ն ի թ ա փ է ի ց | 25 | „ |
| Ի օ ն ջ ա լ ո ւ ի ց | 15 | „ |
| Ք ո ր ո ւ ի ց | 45 | „ |
| Խ ո ւ մ լ ի պ ո ւ ճ ա խ ի ց | 4 | „ |
| Զ ո ւ ջ ա ն ի ց | 10 | տիկ պանիր: |

## ԱԼԱՇԿԵՐՏ, 2 ապրիլ

„Ժողովուրդը անկարող է հին տուրքերը վճարել, իսկ կառավարութիւնը նշանակած է նոր տուրքեր: Կարգադրւած է որ շուտով իւրաքանչիւր տան համար վճարի 10 ղուրուշ թ ի ւ ս ք ի փ ա ր է ս ի (ծխահարկ), բացի դրանից իւրաքանչիւր մարդ, 15 տարեկանից իվեր, նայած գործին և կարողութեան, պիտի վճարէ 5 ղրշից մինչև 700 ղուրուշ դպանձին տուրք: Դա էլ նորոյթն է այս տարի գործադրւած նոր հարկերի շարքում: Առաջինը եղաւ, ձիու ու կովերի գլխարկներ, 10-ական ղուրուշ: Այս անօրինակ տուրքերը առաջ պիտի բերեն ի հարկէ նոր բռնութիւններ և նոր թալաններ:

# ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 12 յունիսի

Սուգի տարեդարձ է:

Մի տարի անցաւ այն օրից, երբ հեռագիրը գուժեց հայոց եկեղեցու կալւածների յափշտակութեան թոթը, այդ տմարդի քայլը միապետական կառավարութեան:

Ի՞նչ արդիւնաբերեց այդ սգալից տարին.— ցասումն, դիմադրութիւն, ցոյցեր, արիւնոտ դիակներ սգապատ եկեղեցիների գաւիթներում, դաւադրական ձեռնարկներ ժողովրդական խաղաղ խաւերի մէջ:

Ի՞նչ կորցրեց հայ ժողովուրդը,— հպատակութեան զգացմունքը, այդ ցայտուն յատկանիշը Արարատեան պատմութեանց:

Ի՞նչ վաստակեց ցարիզմը,— մի նոր թշնամի, խոցւած մինչև սրտի խորքը, անհաշտ, լի ատելութեամբ:

Եւ այդ „զգացումն ատելութեան բորբոքումն է, որ շտապում է արտայայտել այսօր թալանի օրէնքի ամօթալի տարեդարձին: Շշուկներ են լսւում: Լուր կայ, որ քաղաքներում, գուցէ և գիւղերի մէջ պատրաստութիւններ են տեսել ց ո յ ց ե ր անել կառավարութեան դէմ. թէև խ ա ղ ա ղ կերպով ի հանգիստ ընկած զոհերի յիշատակին. Համախմբումն եկեղեցիների մէջ, որ ժողովրդական լեզուով կը նշանակէ աղօթք ցարիզմի անկման համար. գրգռիչ կոչեր՝ ուղղած հասարակութեան — ահա խաղաղ ցոյցը. որը, ո՞վ գիտէ, դեռ ժանդարմի ներկայութիւնից կամ ոստիկանական միջամտութիւնից բորբոքւած, կարող է փոխարկւել մի այլ ցոյցի. ինչպէ՞ս սովորական արդէն ռեժիմի միջոցին.

Տեսնենք թէ ինչով պիտի վերջանայ այդ տխուր օրը: Տխուր և նոյնիսկ վ տ ա ն գ ա ւ ո ր, որովհետև նա պիտի լցնէ ժողովրդական սրտերը ատելութեան նոր զգացմունքներով, որոնց կուտակումը կարող է ծնել քաղաքական մի նոր դիպւած, գուցէ աւելի կնճռոտ, քան այն, որ տեղի ունեցաւ մի տարի առաջ: Նշանները այդ գոյնն են կրում: Վէրքը այնքան խոր է, որ մինչև այժմ էլ թէ հոգևոր իշխանութիւնը և թէ հասարակութեան ներկայացուցիչները ոչ մի կերպ չեն համաձայնւում պետական գանձարանից փող վերցնել,— եկեղեցապատկան փողը — հոգալու ընթացիկ ծախքերը: Կիսատ շինութիւններ կան, ճեմարանը կոպէկ չ՚ունի, հոգևոր դըպրոցների դրամարկղները դատարկ են, Էջմիածնում փող չկայ, հոգևոր պաշտօնեաները ռոճիկ չեն ստանում, շատ գործեր կանգ են առել,— բայց և այնպէս ազդանշանը մնում է նոյնը՝ „Չվերցնել“: Մի երկու հատ փորձեր եղան հոգևորական անձինքների կողմից՝ հաշտ աչքով նայելու կառավարութեան առաջարկներին, որոնցով հրաւիրում, նոյնիսկ յորդորում և խնդրում են՝ գնալ, համաձայնութեան ստորագրութիւն տալ ու փող ստանալ,— բայց այդ փորձերը հանդիպեցին բուռն դժգոհութեան և նոյնիսկ լուրջ սպառնալիքների, ուղղած „թուլամորթ բացառութիւնների“ հասցէին. .

Այսօրւայ ցոյցը մի նոր ազդանշան է այդ ոգւով: Վիրաւոր, թալանի ենթարկւած „եկեղեցին“ չէ ուզում զիջանել: Նա, տարագիր ճամբորդի նման, բռնաւորի չէմքին նստած, արդարութեան է սպասում: Հայոց կաթողիկոսը — երանի՜ չհիասթափւէր — նոր դիմումներ է արել թագաւորին, նրա մօրը, կնոջը, և ասում են՝ շատ ուրիշ ազդեցիկների, դարձեալ ու դարձեալ աղերսելով՝ վերաքննել խնդիրը և ազատել հայ եկեղեցին անհիմն կասկածներից: „Յատուկ Յանձնաժողով պիտի կազմւէր Պետերբուրգում — ասում են հաւատացողները — այդ հարցը վերաքննելու նպատակով, բայց պատերազմը խանգարեց“. . .

Պ ա տ ե ր ա զ մ ը խ ա ն գ ա ր ե ց: Որպիսի միամտութիւն:

14 յունիսի

Կովկասեան կառավարչապետը փորձում է ճառաբանել: Փակ է նրա սիրտը, աւելի փակ՝ գաղտնի ծրագիրների արկղը, բայց լեզուն, որ առաջ էլ վարժ էր շատախօսել, և միայն անցեալ տարւայ „փորձից“ յետոյ ենթարկւեց պապանձման, փոքր առ փոքր բացւում է: Եւ կատակաբանութեան օրէնքին հետևելով՝ նա ուզում է սևը սպիտակ դարձնել, զաւեշտականը ողբերգական: „Դուք ինձ չէք հասկանում, և ինձ համարում էք թշնամի հայերին — ասաց նա՝ դառնալով Թիֆլիսի համքարութեան, որ եկել էր շնորհաւորութեան փոխարքայական պալատը,— մինչդեռ ես եմ ձեր միակ անկեղծ բարեկամը, ձեր բարին ցանկացողը: Այժմ այդ չեն հասկանում, բայց կ՚անցնի տասն, տասնևհինգ տարի և այն ժամանակ միայն կ՚ըմբռնեն, թէ որպիսի՜ անկեղծ բարեկամ էի ես և որքա՞ն օգտակար էին հայերի համար իմ արածներն ու ծրագիրները“:

Բռնաւորը մտածողի դերում:

Լսել է խեղճը կամ կարդացել, որ երկրագնդի վրայ եղել են և կան մարդեր, որոնք անմատչելի են ժամանակակիցներին և յաճախ տգէտ ու խաւար շրջապատի

մէջ բուռն ցասումն են յարուցել դէպի նրանց ստեղծագործողները, բայց մոռացել է, որ այդ վերանորոգող բարձր, փիլիսոփայական մտքերի և սպանիչ, ստոր և ոստիկանական հալածանքների մէջ նոյնքան կապ կայ, որքան պօլիցիականի և փիլիսոփայի, մարդասէրի ու մարդասպանի մէջ։ Իշխան Գօլիցին իր դատարկ սրտի ամբողջ խորքից ատում է հայերին, խլում է հայ գիւղացուց հողը, եկեղեցուց՝ նրա սեփականութիւնը, ընկերութիւններից՝ նրանց իրաւունքները, ժողովրդից՝ նրանց դպրոցը։ Հալածում է հայկական միտքը, գրականութիւնը, լեզուն և այդ բոլորից յետոյ զաւեշտական հանդգնութիւն ունի հրապարակով ճառելու, թէ „իրեն չեն հասկանում“ և „ինքն է հայերի միակ անկեղծ բարեկամը“։

Փոխարքայական պալատի մէջ, նրա հիմնարկութեան օրից ց՚այժմ, շքեղազարդ խնջոյքների ժամանակ կամ գիշերային „օրգիա“-ների միջոցին, կատակներ շատ են արուել, շատ ճառեր են արտասանուել՝ պաշտօնապէս և անպաշտօն, բայց այնպիսի քաղաքական կատակ, ինչպիսին այժմեանն է, երբէք և ոչ ոք չէ լսել։ Դրա համար պէտք էր լինել մի այնպիսի կատակաբան, ինչպիսին ցարի այժմեան „սիրելի ներկայացուցիչն“ է, որին տուած են անսահման, բացառիկ իրաւունքներ... յիմարութիւններ գործելու և աւելի էլ մեծ յիմարութիւններ ասելու։

Շատ ափսոս միայն, որ այդ „յիմարութիւնները“ ժպիտ ու քրքիջ չեն յարուցանում, այլ վիշտ ու արտասուք։ Եւ յիրաւի։ Կարելի՞ է միթէ առանց վշտի ու արտասուքի ընդունել, օրինակ, Գօլիցինեան ամենավերջին ծրագիրը, որը բարձրագոյն հաստատութեան արժանացած, արգելում է բոլոր օ տ ա ր ա հ պ ա տ ա կ հայերի մուտքը Կովկաս և առհասարակ Ռուսաստան։ Դա մի նոր ու նենգաւոր հալածանք է հայութեան դէմ։

Ամէն մի մարդ, ինչքան էլ նա խաղաղ և անմեղ լինի, բայց եթէ կրում է հ ա յ անունը և ռուսահպատակ չէ, չէ կարող ոտք դնել ռուսական սահմաններում, համաձայն այդ նոր կարգադրութեան։ Ոչ մի ռուս դեսպանատուն և հիւպատոսարան չէ ուզում վ ի զ է անել անցագիրը, ասելով՝ „Արգելուած է, իրաւունք չ՚ունենք“։ Եւ հայ ճամբորդը, լինի նա ամերիկական քաղաքացի, թէ թիւրքահպատակ, եւրոպաբնակ թէ պարսկաստանցի, կանգ է առնում „ամենամեծ բանտի“ դռների առջև, ինչպէս չինական պատի դիմաց։ Ողբալի է մանաւանդ պարսկահայերի վիճակը, որոնք դէպի Եւրոպա անցնելու կամ Եւրոպայից իրենց երկիրը դառնալու համար այլ ճանապարհ չ՚ունին, բայց եթէ Կովկասն ու Ռուսաստանը, և որոնց համար, չնայած անթիւ աղերսանքների և Շահի մինիստրների միջամտութեան անգամ, ոչ մի դուռ չի բացւում։ Խնդրատուներին դեսպանատները առաջարկում են դիմել Պետերբուրգ, ներքին գործերի մինիստրութեան, հրէշապետ Պլէվէին, որից արդարութեան զգացմունքը, ինչպէս գիտէք, այնքան հեռու է, որքան երկինքը՝ երկրից։

Ի՞նչն է եղել այդ խենթագոյն կարգադրութեան պատճառը՝ կը հարցնէք։ Գլխաւորը այն, որ Գօլիցինի կարծիքով, օտարահպատակ հայերն են, որոնք քաղաքական յուզմունքներ են տարածում կովկասեան հայութեան մէջ, և հետևաբար՝ Կովկասը խաղաղացնելու համար՝ ամենալաւ միջոցն՝ այդ „քաղաքական միկրոբները“ վանելն է ցարերի թագաւորութիւնից։ Գաղտնի ոստիկանութեան կարծիքով՝ Գօլիցինի կեանքի դէմ անցեալ նոյեմբերին փորձ անողները թիւրքահպատակ հայեր են եղել, և այդ „կարծիքն“ արդէն բաւական է, որ Թիֆլիսի պալատի մենաւորը՝ լցուած անծայր ատելութեամբ, առաջարկ անէր Պետերբուրգի իր համախոհներին՝ արգելելու օտարահպատակ հայերի մուտքը Ռուսաստան։

Շնորհիւ այդ օ ր է ն ք ի՝ հազարաւոր մարդիկ սահմանը անցնել չեն կարող. ճամբորդը իր տունը դառնալու հնար չ՚ունի, վաճառականը՝ ոտք դուրս դնելու իրաւունք, հիւանդը՝ բժշկուելու չի կարող գնալ, երիտասարդը՝ ուսանելու։ Եւ իշխան Գօլիցին, հեղինակը այդ դասական ամբարտաւանութեան, առանց խղճի խայթի՝ առանց կարմրելու, բայց երևի նոյեմբերեան յիշողութիւններից ազդուած՝ պաշտօնական ճառասացութեամբ յայտարարում է՝ որ „ի ն ք ն է հ ա յ ե ր ի մ ի ա կ ա ն կ ե ղ ծ բ ա ր ե կ ա մ ը“։

„Բ ա ր ե կ ա՛ մ“։ Տեսէք թէ որպիսի խօսքերով է ուզում բարձ դնել հայերի գլխատակին այդ տկարամիտ եզուիտը, այդ սամօդուր-սենատորը։

—

Վերջաբանի փոխարէն։

Հայերի „անկեղծ բարեկամը“ չորս ամսով դադարեցրեց մանկական „Աղբիւր“ ամսագիրը և նրա յաւելուած պատկերազարդ „Տարազ“ շաբաթաթերթը... վ ն ա ս ա կ ա ր ո ւ ղ ղ ո ւ թ ե ա ն համար։

Հեշտ է երևակայել թէ, ինչ պիտի լինի այդ „վնասակար ուղղութիւնը“ մի մանկական ամսագրի մէջ, որ իր պստլիկ ընթերցողներին զուարճացնելու համար ռ է բ ո ւ ս ն ե ր է տպագրում, իսկ մեծերի համար՝ դերասանուհիների պատկերներ, այն էլ միշտ անցած գրաքննիչի ձեռքով, ամենահաւատարիմ կ ծ ա ն ը միապետական երկրում։ Երբ անցեալ տարի, 1903-ին, իշխան Գօլիցին դադարեցրեց „Մշակ“ և „Նօվօէ Օբօզրէնիէ“ նոյնպէս „վնասակար ուղղութեան“ պատճառով, գտնուեցին „հեռատես գլուխներ“, որոնք մեկնաբանում էին այդ կարգադրութիւնը.— „Քաղաքական թերթեր են, ազդեցիկ, թէև նախնական գրաքննութեան ենթակայ“, ասում էին դրանք։ Ինչ պիտի ասեն այժմ։ Ինչ „վնասակար ուղղութիւն“ գտաւ մեր վսեմափայլ Սամօդուրը մի մանկական ամսագրի մէջ, որը նոյնիսկ իր պրօգրամի զօրութեամբ, նոյնքան հեռու է ո ւ ղ ղ ո ւ թ ի ւ ն ի ց, որքան մանկութիւնը՝ քաղաքականութիւնից։

Ամէն մարդ իրաւունք ունի յիմար լինելու, բայց իշխան Գօլիցին — երդւում ենք բոլոր սուրբերով — ի չարն է գործ դնում այդ իրաւունքը։

Է. ԱԿՆՈՒՆԻ

---

# Թ Ե Ր Թ Օ Ն

## ՍԱՍՈՒՆԻ ՀԱՐՑԸ
## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

ՅՈՒՆԻՍԻ 9-Ի ՆԻՍՏ

*(Պաշտօնական արձանագրութիւն)*

—

ՆԱԽԱԳԱՀ.—Խօսքը պատկանում է պ. Ֆրանսիս դը Պրէսանսէին՝ ուղղելու մի հարցապնդում արտաքին գործերի պ. մինիստրին, որը այդ ընդունում է։

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ. — Պարոննե՛ր,

Մի քանի օր առաջ ես հաղորդեցի արտաքին գործերի պ. մինիստրին, որ դիտաւորութիւն ունիմ մի հարցում տալու այն ծանր անցքերի առթիւ, որոնք նորերս տեղի են ունեցել Հայաստանի մէջ, Սասունում և Մուշում. Պ. մինիստրը յայտնեց իր համաձայնութիւնը տալ այսօրուայ համար:

Պատգամաւորական ժողովը կը հասկանայ այն անհամբերութիւնը, որ ես ցոյց եմ տալիս այդ անցքերը ամբիոնի առաջ բերելու համար, նա կը հասկանայ նոյնպէս, երբ կը տեղեկանայ, որ ներկայ դէպքում մենք գործ ունենք ոչ թէ բարբարոսութեան կամ ֆանատիկոսութեան մի պատահական բռնկման հետ, այլ նախամտածուած մի ծրագրի սիստեմատիկ գործադրութեան հետ: Պատգամաւորական ժողովը կը հասկանայ իմ անհամբերութիւնը, երբ նա կիմանայ, որ մեր աչքի հրապարակ են գալիս ոչ թէ լոկ փաստեր, կամ կցկտուած փաստերի մի շարք, այլ կրկնողութիւն, վերսկսում այն ոճրի, որ սրանից 10 տարի առաջ այնքան խորապէս յուզեց Եւրոպան:

Այն օրից, երբ ես ծանուցի իմ դիտաւորութեան մասին, մէկը կանխեց ինձ բրիտանական պարլամենտի մէջ: Համայնքների ժողովի մի հեղինակաւոր անդամ, արտաքին գործերի նախկին օգնական-մինիստր և նշանաւոր պրոֆէսոր Ջէյմս Բրայս, մի հարցում արաւ այդ առիթով: Արտաքին գործերի մինիստրութեան պետական քարտուղար լորդ Պերսիի կողմից տրուած պատասխանից ես առաջ կը բերեմ այն, որ նա ընդունեց, որ նոյնիսկ պաշտօնական հաղորդագրութեան համեմատ, 25 հայ գիւղեր աւերուած են Սասունի շրջանում, 12-ը Մուշի և 12-ը Գէնճի շրջանում: Ինձ թւում է, որ դա բաւականաչափ հաստատում է արդէն այն իրողութիւնները, որոնց վրայ ես հրաւիրում եմ ձեր ուշադրութիւնը:

Սասունը, ինչպէս բոլորդ յիշում էք 1894-ի անցքերից, այն լեռնային շրջանն է, որ գտնւում է Հայկական Տաւրոսի մէջ, Վանայ լճի մօտ, ունենալով իր հիւսիսում՝ Մուշը, հարաւում՝ Դիարբէքիրը և արևելքում՝ Վանը: Նա բնակուած է խառը՝ հայ և քիւրդ ազգաբնակութիւններով:

Հայերը երկար տարիներից, կարելի է ասել, դարերից ի վեր գտնւում են այնտեղ միանգամայն ողբերգական մի դրութեան մէջ: Նրանք գտնւում են, ասես, երկանի երկու քարերի միջև. մի կողմից՝ թիւրք իշխանութիւնների ճնշումը, միւս կողմից՝ քիւրդ ցեղապետների ֆէօդալական անիշխանութիւնը: Մի քանի ժամանակ աղաները կամ թափառական ու նստակեաց ցեղերի պարագլուխները բաւականացել էին լոկ գերիշխանների պաշտօնով, որոնք պահանջում էին իրենց ճորտերից մեծարանքներ և չափազանց ու ապօրինի տասանորդներ, բայց որոնք, այնուամենայնիւ, տարածում էին նրանց վրայ այն արհամարհոտ հովանաւորութիւնը, որ ոչխարների մի հօտի սեփականատէր տարածում է իր անասունների վրայ: Շնորհիւ յայտնապէս անուրանուած քաղաքակրթութեան առաջադիմութեանը արևելքի մէջ, նրանք դադարեցին գերիշխան լինելուց և դարձան պարզ աւազակներ: Ներկայումս, նրանք ամէն տարի պահանջում են հայերից վճարել միշտ աւելի ու աւելի ծանր հարկեր, այն ժամանակ, երբ տնտեսական գանձապետութիւնը ես չէ կորցնում իր իրաւունքները:

Այդ խեղճ, երկրագործ ազգաբնակութիւնից՝ թիւրք կառավարութիւնը առնում է ոչ պակաս քան 13 օրինական տուրքեր, առանց հաշւելու ապօրինի տուրքերը: Ես կը բաւականանամ առաջ բերելով միայն հողային հարկը 5%, 1/7-ի կամ 1/5-ի տասանորդը, որ չեն վճարում բնական բերքերով, այլ դրամով և կանխիկ, ապա այն հարկը, որ դրւում է ոչխարների վրայ, որոնք կազմում են հայերի գլխաւոր հարստութիւնը. վերջապէս, զինւորական տուրքը, առնւազը 12 ֆր. 50 սանտիմ, որ առնում են իւրաքանչիւր մի չափահաս հայից:

Ահա այդ շրջանի մէջ է, որ ներկայ տարուայ սկզբից ի վեր տեղի են ունեցել այն իրողութիւնները, որոնց վրայ կուզէի հրաւիրել պատգամաւորական ժողովի ուշադրութիւնը: Մի քանի ամսից ի վեր Կ. Պոլսում ասում էին, որ մի բան կատարւել է այդ կողմերում: Ասում էին, թէ յեղափոխական մի շարժում է մղւում Մուշի և Սասունի մէջ: Փորձել էին հայ ազգի առաջնորդ՝ պատրիարք Օրմանեանին միջամտել տալ, որպէս զի, այսպէս ասած, հպատակեցնէ իր հօտը սուլթանի կամքին: Միմիայն այդ հանգամանքը կարող էր արդէն սարսափեցնել մեզ, քանի որ յիշեցնում էր 1894-ի ոճրի նախանշանները:

Եթէ կամենաք վերադառնալ ձեր յիշողութեան մէջ այդ ժամանակաշրջանում կատարուած անցքերը, կը տեսնէք, որ ծագումը միևնոյն է, ինչ որ տեսնում ենք մեր աչքի առաջ այս վայրկեանիս:

Որքան էլ դանդաղ և դժուարութիւններով հասնեն մեզ լուրերը այդ վայրերից, որքան էլ նրանք, այսպէս ասած, մաղւին տաճկական մաքսատներում և փոստերում — մենք այնուամենայնիւ կարողացել ենք ստանալ նամակներ ու հեռագիրներ, որոնք վկայում են, որ մեծ գործողութիւնը սկսւել է փետրուար ամսից:

Այդ ժամանակից ի վեր Մուշի շրջանի Ցունան մեծ գիւղը բոլորովին աւերւել է, ամբողջ ազգաբնակութիւնը կոտորւել, կանայք ու երեխաները նմանապէս կրել են անարգանքներ թիւրք զինւորների սոդոմական վայրագութեան բոլոր նրբութիւնները: Այդ ժամանակից ի վեր երկար շաբաթների ընթացքում Դուռը զբաղուած էր պաշտպանուելով, ինչպէս նա անում է առհասարակ, հերքումներով, խծբծանքներով, իր զոհերի վրայ բարդելով այդ կոտորածների պատասխանատուութիւնը:

„Բարեբախտաբար, Եւրոպան այլևս այնպէս անգիտակ չէ, ինչպէս 10 տարի սրանից առաջ: Մի քաջարի թերթ, հիմնուած հայերի և իրենց բարեկամների միջոցով, Pro Armenia-ն, յանձն է առել պարտականութիւն՝ լուսաւորելու հանրային կարծիքը, մատակարարելու նրան այն բոլոր լուրերը, որոնք կարող են մեզ հասնել այն հեռաւոր երկրներից, երբեմն նաև այն տարտամ ձայները, որ Դիզրայէլի 1876-ին, բուլղարական կոտորածների նախընթաց օրը, անւանում էր „բազարի շշուկներ“, որոնք սակայն երևան բերին մի ամբողջ ազգի դէմ գործած ոճիրը:

Այդ մերկացումների շնորհիւ մամուլը յուզուեց: Պարլամենտական գործիչների և հրապարակախօսների մի միջազգային խորհրդաժողով տեղի ունեցաւ Լոնդոնում՝ դիմագրաւելու համար 1894-ի ոճրի վերանորոգման: Նոյնիսկ դիւանագիտութիւնը, որ այնքան ուշ է յուզւում, սթափւեց: Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները մի քանի անգամ հրաւիրեցին սուլթանի ուշադրութիւնը ներկայ դրութեան վտանգների վրայ և մանաւանդ այն վտանգի վրայ, որ առաջ է գալիս՝ Մուշի

և Սասունի շրջականերում 18 գունդ կանոնաւոր զօրքեր կենտրոնացնելովս։

Ցարաքախտաբար այդ միջամտութիւնը չափազանց ուշ էր գալիս։ Նա չէր կարող ազդու լինել, քանի որ Եւրոպան իր (Թուրքիայի նկատմամբ) իր աւանդական անշարժութեամբ, թոյլ տուեց սուլթանին վերստին նշանակել միևնոյն տեղերում, միևնոյն քաղաքացիական և զինուորական պաշտօնների մեջ այն նոյն անձնաւորութիւններին, որոնք վարում էին այդ պաշտօնները 1894 և 1896-ի ահռելի արեան և արտասուքի տարիներում, որ դուք չէք մոռացել — դրանք են՝ հրամանատար Զէքի փաշա, որ դեռ այսօր էլ Երզնկայի չորրորդ զօրաբանակի գլուխն է կանգնած և Բիթլիզի վալին, որ նորերս նշանակուեց և որը նոյն տխրահռչակ Ֆէրիդ բէյն է, որ յայտնի է իր մասնակցութեամբ Պոլսոյ կոտորածներում։ Զուր տեղը չէր, որ այդ մարդիկ նշանակուել են սուլթանից միևնոյն պաշտօնների մեջ։ Նրանց անունը միայն ինքնին մի ամբողջ ծրագիր է։ Բացի այդ, նրանք ստացել էին որոշ, դրական հրամաններ, որոշ յանձնարարութիւն՝ ձեռնարկել ոչնչացման, բնաջնջման այն ժողովրդի, որին չեն ներում իր ապրելը, յարատևելը՝ 1896-ի ջարդերից յետոյ, և որին չեն ներում մանաւանդ այն՝ որ այն ժամանակից իվեր նա — հայ ժողովուրդը — հաստատապէս վճռել է դիմադրել և մեռնել, քան թէ վիզը երկնցնել ոչխարի պէս, որը մնում է համր, անմռունչ, երբ նրան մորթում են սպանդանոցում։ (Ճաշ լաւ, շատ լաւ, ծայրայեղ ծախսերի մեջ)։

Մի ֆրանսիացի հրապարակախօս, որին, ի հարկէ, չեն կարող մեղադրել անձնւնհասութեան ու անչափաւորութեան մեջ, պ. Անատոլ Ֆրանս Բօլիօ, անցեալ օր առիթ ունենալով խօսելու այն խոզութիւնների մասին Բոստոնի մեջ, յայտարարեց — և ես բացարձակապէս միանում եմ նրա հետ — թէ նա միայն ծափահարել ու շնորհաւորել կարող է հայ ժողովրդին այն բանի համար, որ սա, վերջապէս, զէնք է վերցրել՝ նուաճելու համար ապահովութեան և ազատութեան տարրական պայմանները։ (Շատ լաւ, շատ լաւ, բազմաթիւ ծափահարութիւններ)։

Զէքի փաշան և Ֆէրիտ բէյ հրաման են ստացել՝ սկսել հայ ազգաբնակութեան ոչնչացման գործը Մուշի և Սասունի շրջաններում։ Նրանք գործել են համաձայն այն մեթոդի, որ սովորական է դարձել Տաճկաստանի մեջ, երբ ուզում են ոչնչացնել մի ազգաբնակութիւն. սկսում են պահանջել վճարումը ոչ միայն չմնացած տարւայ տուրքերի, այլ և այսպէս անւանուած, յետնեալ տուրքերը, որոնք առանց որևէ խնայողութեան կարող են բարձրանալ մինչև 10, 12 և 14 տարի։

Ներկայումս յանդգնութիւն ունին պահանջել Սասնոյ շրջանում, 1894-ի ջարդերի մնացորդներից ու ժառանգներից, վճարումը այն տարիների, որ նրանք վճարել են երկու և երեք անգամ այդ նախկին թէկաններին, որի համար սակայն նրանց բնականաբար չեն տուել ստացագրեր։ Այդ ազգաբնակութիւնները վարժուած են յուսահատութեան՝ քանի որ նրանց բերանից խլում են հացի վերջին կտորը։

Նրանք դիմադրեցին. նրանք կազմեցին ապստամբական խմբեր, որոնք գրաւեցին բնական թէով գիւղեր և ռազմական կէտեր — Հայոց Տաւրոսի բարձրութիւնների վրայ, ուր սեպ, ժայռոտ միջնաբերդի պէս թառած է Սասունը։ Այդ վայրկեանին և սկսեց այն գործողութիւնը, որի վրայ հրաւիրում եմ պարլամենտի ուշադրութիւնը։

Փետրուարի վերջին օրերում Ցօրնան գիւղը աւերուած էր. ապա մարտի վերջերին Զէքի փաշան Մէկէնիսէկ առաջ մղեց իր տնօրինութեան տակ գտնւող ուժերը, այսինքն 4 դ զօրաբանակի կանոնաւոր վաշտերը, ապա նաև համիդիէներին, որոնք ուրիշ ոչինչ են, բայց եթէ բաշիբօզուկների գնդեր, և վերջապէս քրդերին, որոնք թափառական բարբարոսներ են — և այդ բոլոր ուժերը նա թափեց Սասունի վրայ։

Ես չեմ ասում, ի հարկէ, թէ տեղի ունեցած արիւնոտ ողջակէզները սոսկ կոտորածներ են եղել։ Եղել են նաև կռիւներ — և ես դրա համար բարձրաձայն գովում եմ հայերին — եղել են կռիւներ, անհաւասար կռիւներ, քանի որ հայերը անզէն էին, բայց դրանք այն կռիւներից են, առանց որոնց ոչ մի ժողովուրդ չէ ձեռք բերում գոյութեան իրաւունք։

Նրանք չըկամեցան, ինչպէս 1894-ին նահատակուել, նրանց նոյնիսկ փորձելու զէնքը պաշտպանելու և բողոքելու։ Նրանք դիմադրեցին, ապրիլ ամսից իվեր, առանց տանելու յաղթանակը, որ անհնարին էր։

Ապրիլ 10-ին՝ քրդերի անակնկալ յարձակում Կէլիէկուզանի վրայ։ Ապրիլ 12-ին քրդերը յետ են մղւում սասունցիներից մեծ կորուստներով։ Ապրիլի 20-ին վալին հասնում է այդ շրջանը և անմիջապէս պահանջում է երեւելիներին, եպիսկոպոսներին ու բարեկեցիկ հայերին։ Ապրիլի 23-ին Սասունից յանկարծ հեռանում է վալին, իր հետ տանելով, որպէս պատանդ, եպիսկոպոսներին ու հայ երեւելիներին, որոնց փակում են բանտերում, ուր նրանց մեծ մասը տակաւին մնում է, մատնուած զզւանքների անանուն չարչարանքների։

Ապրիլի 25-ին սկսում են Սէմալի պաշարումը, ուր ապաստանել էին հայ ապստամբ խմբերը՝ հերոսական Անդրանիկի առաջնորդութեամբ։ 28-ին գրաւում են Կէլիէկուզանը, ուր հայերը խմբովին կենտրոնացել էին, թէ կռւողներ և թէ խաղաղ ազգաբնակութիւն։ Թիւրքերը յարձակւում են Կէլիէկուզանի վրայ 12,000 կանոնաւոր զօրքերով, 26,000 քրդերով և 15 թնդանօթներով։

Սասունցիք դիմադրեցին աւելի քան ութ օր, հիանալի քաջութեամբ Անդրանիկի, Վահանի ու Գէորգի հրամանատարութեան տակ։

Մայիսի 5-ին սկսած գիտէք յետոյ, ողջանդամ ազգաբնակութիւնը, տեսնելով որ չէ կարող օգտակար կերպով շարունակել դիմադրութիւնը, խմբովին քաշւում է Հարաւան Անտոք լեռը, որը տակաւին ծածկուած էր ձիւնով։ Նա տանում է իր հետ կին ու աղջիկների այն մասը, որը՝ կարող էր դիմադրել ծանրագոյն յոգնութեան ու փորձանքներին։ Դժբախտաբար նա մոռացուած էր թողնելիր ետևը մեծ թւով պառաւ, ծեր ու երեխաներ և ահա այդ ժամանակ է, որ մի անգամ ևս կատարուեցին այն եղեռնագործութիւնները, որոնք 1894 թւին ապստամբեցրին քաղաքակիրթ աշխարհի խիղճը, այդ ամբողջ ազգաբնակութիւնը կոտորեց մինչև վերջին երեխան՝ Զէքի փաշայի հրամանով, նրա աչքերի առաջ։

Այդ ամենից յետոյ, դուք կըմբռնէք կարծեմ, որ

հայերը, որոնք միայն դանդաղ ու դժուարութեամբ կարողացան հասցնել Եւրոպային այս պատմութիւնը և իրենց բողոքը, յոյս ունեն — այնպէս նրանք կը յուսահատէին, որ այս անգամ Ֆրանսիան, Եւրոպան չեն մնայ անշարժ, անտարբեր, անզօր հանդիսատեսներ այդ ոճիրների վերանորոգման հանդէպ (Ծափահարութիւններ):

Մեզ են դիմել նրանք և ես գիտեմ, թէ ինչ պատասխան պիտի տան մեզ, գիտեմ, քանի որ ճանաչում եմ օսմանեան դիւանագիտութեան սովորութիւնները: Նա նախ և առաջ հերքում է իրողութիւնները իրենց ամբողջութեամբ, ապա երբ ստիպուած է խոստովանել նրանց մի մասը, նա ձգնում է մեղմել նրանց, ապա երբ դուրս են մղում նրան իր վերջին պաշտպանողից, նա սկսում է հաւատացնել, թէ իսկական յանցաւորները իրենք զոհերն են: Միթէ մենք կարող ենք ընդունել այն պատրուակները, պարտութիւններն ու ստերն որոնք՝ դժբախտաբար, 1894-ին կարողացան կանգնեցնել, խորտակել եւրոպական ու ֆրանսիական դիւանագիտութեան անհրաժեշտ գործողութիւնը: Ոչ, մենք այդ չենք կարող անել, մենք այդ չենք անել: Մենք այդ չենք անի, գիտենք օսմանեան դիւանագիտութեան գործելու սովորական եղանակները և, մանաւանդ, քանի որ նոր փաստեր չեն սրանք, որոնց նկատմամբ ուէ մի տեսակով կարող էր ներելի լինել, չնայած այնքան վճռական փորձերին: Իրօք մենք հանդիսատես ենք մի մեծ ոճրի կրկնութեան, որի յուերժացած մանրամասները վերարտադրւում են մեր աչքերի առաջ, անհաւատալի ճշտութեամբ: (Ծափահարութիւններ):

Կը շարունակուի

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Իր յուլիս 14-ի համարին մէջ Temps՝ խմբագրականով մը կը խօսի Հայաստանի վերջին դէպքերուն վրայ այդու լեզուով մը՝ ուրկէ առաջ կը բերենք.

„Այն օրինաւոր յուզումը, որ առաջ բերին Սասնոյ կոտորածներու վերսկսումը և ռուս-աւստրիական խիստ անբաւական բարենորոգումներու ծրագրին այպանական կիրարկութիւնը Մակեդոնիայի մէջ, արտայայտուեցաւ ոչ միայն Եւրոպայի ազատական երկիրներու զանազան խորհրդարաններուն մէջ, այլև միջա-պառլամենտական կոնֆերանսով մը՝ Լօնդոնի մէջ Անգլօ-հայկական ընկերութեան — որուն նախագահն է պ. Ստեֆենսըն — հրաւիրանքով և Պալքանեան կոմիտէի աջակցութեամբ: Մեծն-Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները միասին կը հաւաքուին քննարկելու համար այն միջոցները, որոնք կարելի պիտի ընեն արևմտեան երեք մեծ պետութիւններու գրական գործակցութիւնը:

„Անգլիացի երեսփոխան մը, պ. Բրայս, արտաքին գործերուն նախկին օգնական-նախարար, ունենալով իր կողքը՝ փոխ-նախագահ, ֆրանսիացի երեսփոխան մը, պ. Ֆրանսիս տը Պրեսանսէ, կը նախագահէր այդ կոնֆերանսին, ուր բազմաթիւ անդամներ անգլիական երկու խորհրդարաններէն, պատուաբեր հաւաքուած էին բերել աջակցութիւնը իրենց ներկայութեան ու խօսքին այդ այնքան կարևոր ու արժանաւոր դատին:

„... Այդ կոնֆերանսը ցոյց տուաւ թէ որ կը տիրէ ընդհանուր համաձայնութիւն երեք ազատամիտ ազգերու քաղաքագէտ անձնաւորութիւններու մէջ՝ ճանչնալու համար ստիպողականութիւնը միացեալ կոռոփի միջամտութեան մը Թուրքիայի մէջ: Այնքան ջախջախիչ ու այնքան բարեկամական համերաշխութիւն մը, որ հաստատուած է երեք պետութիւններու մէջ և որ չի կրնար քանդել առանց լրջապէս վտանգելու քաղաքակրթութեան, յառաջդիմութեան ժողովրդականութեան դատը, պարտաւոր է ամբողջովին ամրապնդել, ծառայելով բարեկարգութեան ու խաղաղութեան հաստատման կայսրութեան մը մէջ, որ կը վտանգուի ու կ'աւերուի ընկերակալութեան մը խելակորոյս ոտնձգութիւններով:

„... Պէտք է ստիպել սուլթանը փրկանք մը չտալ իր ձեռքին մէջ մահացու գործիք մը դարձուցած այն անկախութեան համար, զոր նա կը վայելէ Տաճկաստանի ամբողջութեան պահպանման սկզբունքին շնորհիւ, սկզբունքի՝ որ ուրիշ նպատակ և գոյութեան իրաւունք չունի՝ եթէ ոչ արգիլել իրարու բաղխելէ մեծ պետութիւններու ագահ ցանկութիւնները:

„Որքան ալ իրական ըլլայ կարևորութիւնը այդ կարգի կոնֆերանսի մը, որ կ'ապացուցանէ զգացումի ու մտասկէտի միակութիւնը քաղաքակրթութեան գլուխ կանգնած ազգերու, անոր միակ շարժառիթը չէր անշուշտ անգամ մը ևս գոյութիւնը ստուգելու խիստ ծանօթ հոգեկան վիճակի մը. այդ ցոյցը կէտ նպատակի ունէր կազմակերպելու խորհուած ու նոյնօրինակ միջնորդութիւն մը փոխադարձ կառավարութիւններու մօտ, բաղձանք գտնելով քաջալերել անոնց բարի կամեցողութիւնը, վառել անոնց եռանդը ու մղել զանոնք միացեալ քայլի մը, որ ունենայ ընոյթը խլելու Բ. Դռնէն պաշտօնանկութիւններ և անհրաժեշտ դարձած բարենորոգումներ:

„Լորդ Լանստաուն, կոնֆերանսին ղրկած իր մէկ պաշտօնական հաղորդագրութեան մէջ, բարոյական խոստումներ ըրած է, դիւանագիտութեան հետ ընդմիշտ անբաժան խոհեմութեամբ մը, որոնց պահպանումն ու գործադրութիւնը կախուած է հասարակային կարծիքէն ու անկից միայն: Ներելի չէ կասկածիլ թէ պ. Դելկասէ ևս քաջ բոզած չըլլայ միևնոյն զգացումները, որոնց նա յաճախ տուած է հրապարակային ու պաշտօնական արտայայտութիւն մը, և այդ տեսակէտն հաստատումը առաւել ընորոշուած է պատուաբեր կերպով իրեն գործելու եղանակը, իր կարգ մը նախորդներու բռնած գիծէն":

Ու Temps կը վերջացնէ իր այդ խմբագրականը խիստ բողոքով մը Սասնոյ կոտորածին շարունակութեան, մակեդոնական բարեկարգութիւններու անզօրութեան դէմ, հրաւիրելով ազատամիտ կառավարութիւնները, հաւանութեամբ սակայն այն բոլոր պետութիւններու՝ որոնք Արևելքի մէջ նւիրուած չեն ոխերիմ ու ձեռնածիրական քաղաքականութեան մը, որ համաձայնին հետեւեալ կէտերու մէջ. „Պաշտօնանկութիւն Զէքի փաշայի և Ֆերիդ բէկի, — Գործադրութիւն 61-րդ յօդուածի կիրարկութեամբ 1895-ին խմբագրուած բարեկարգութեանց ծրագրին. — Բազմացում Մակեդոնիայի մէջ միջազգային ոստիկանութեան ու հաստատութիւն երկու երկիրներուն մէջ գրական կոնտրոլի մը":

Երբ այս համեստ ծրագիրը կարդաք, Temps կ'ադա-

ջարդէ զայն Բ. Դուռն ենթարկել, եւ երբ այս վերջինը դիմադրէ՝ ընել նաւային ցոյց մը, նման այն ցոյցերուն, որոնք Բերլինի դաշնագրութենէն իվեր, հինգ զանազան առիթներու մէջ գործադրուած և միշտ յաջողած են։

Temps-ի վերոյիշեալ խօսքերը աւելի նշանակութիւն կը ստանան, երբ յիշենք Ֆրանսիայի արտաքին գործերու նախարար Պ. Դելկասէի յայտնի յայտարարութիւնը, որով նա՝ ակնարկելով Թուրքական վատթար ռէժիմը, հարստահարուող ու մարտիրոսացող ժողովուրդներու փըրկութեան միակ միջոցը կը գտնէր ապստամբութեան մէջ։ Առաջին անգամն էր թերեւս, որ նախարար մը, մոռցած իր պաշտօնին խոհեմ պահպանողականութիւնը՝ կը նուիրագործէր Ֆրանսայի խորհրդարանի բեմէն պատմական այդ մեծ ճշմարտութիւնը։

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՖԼԵՀԱՆ
(ՃԻՕՁ-ԱՂԲ — ՏԱՃԱՏ)

(Տես „Դրօշակ" № 6)

Վանեցի շատ չքաւոր ընտանիքի մը զաւակ, Յովհաննէսը իր նախնական կրթութիւնը ստացած էր Նորաշէնի թաղային երկդասեան դպրոցի մէջ, ուրկից դուրս գալով նետուած էր այն ժամանակուան „Արմենական" տաք ու թարմ գործունէութեան մէջ։

1896 թիւը արեան ու արցունքի թւական դարձաւ համակ Վասպուրականի համար։ „Վանի դէպքն" էր։ Յովհաննէսը ազատ ձեռքին ընկերներուն հետ միատեղ յանդուգն յամառութեամբ՝ դիրքէ դիրք, կը պաշտպանէին զօրքին ու խուժանին դէմ։

Անկէն վերջ՝ երբ ահագին Վասպուրականը՝ ջահիլ-չիւան երիտասարդութեան գերեզմանը դարձած էր, ճէօչ-աղան ընդհանուր վհատման ժամանակ կը դիմէր Պարսկաստան, ապա Ռուսաստան մի առժամանակ հոն մնալու դիտաւորութեամբ։

Վանեցի պանդուխտներէն շատերը այդ թւականներին կը դիմէին կովկաս։ Անդրկովկասեան կրօնական ապաստանը, քաղաքներու մէկին մէջ ճէօչ-աղան մի պաշտօն կը ստանայ, սակայն չի կրնար երկար մնալ տաղտկացուցիչ պաշտօնին մէջ։

Խանասորի արշաւանքի լուրը առնելուն պէս՝ կ՚ըշտապէ դէպի Պարսկաստան ու կը մտնէ կամաւորներու շարքին մէջ։ Ընկերները կը պատմեն որ ան շատ անգամներ կը մոռնար ինքնիրեն, դիրքէն դուրս կը նետուէր թշնամու գնդակներու սարսափելի տարափին տակ։ Արշաւանքէն ողջ վերադառնալով կը վերստանայ Անդրկովկաս իր նախկին պաշտօնին. սակայն այս անգամ աւելի կարճ կը տեւէ իր պաշտօնավարութիւնը։ Երկիր զէնք անցնելու նոյն ժամանակուան նախնական ձեւը գոհացուցիչ չէր գտներ և այդ հանգամանքը երկար օրերու խորհրդածութեան առարկայ դարձած էր անոր համար. ու լուռ տանջանքներէ յետոյ՝ որոշեց այս անգամ թողուլ Ռուսաստանի հողը և նուիրուել փոխադրութեան գործին, նրա աւելի լայն ու աւելի կանոնաւորման հարցին։ Այդ նպատակով նա կը դիմէ Ա.-ի կոմիտէին՝ առաջարկելով գնալ ու գործակցիլ Աղբօր՝ Գ.-ի մէջ։ Պէտք եղած յանձնարարականով կ՚երթայ Աղբօր մօտ, որը կ՚ուղարկէ զինք Շ., ուրկէց կը նշանակուի Ք.-ի գծի վրայ։ Ահագին դժուարութիւններու և խոչընդոտներու յաղթելով՝ անիկա մեծապէս կը նպաստէ փոխադրութեան գծի կանոնաւորման։

Երկու տարի անընդհատ նուիրուելով այդ բեղմնաւոր գործին, Ֆլեհան կը կասկածուի և կ՚ստիպուի թողնել այն տեղն ու վերադառնալ Վ.ան։ Միանգամ կասկածուելով, կը խուզարկուի իրենց տունը, ուր կը գտնուի „Դրօշակ"-ի մէկ օրինակը, որով ստիպուած կը լինի փախստական դառնալ և մի քանի ամիս յետոյ կը սկսի ազատ շրջիլ։

Գաւառներու կազմակերպութիւնը—այդ միջոցին թոյլ ու անկանոն լինելուն պատճառով՝ կը վճռուի կազմել գաւառական կոմիտէ մը, որու անդամներէ մէկը կը լինի ինքը. իսկ Վարդգէսի ձերբակալումէն վերջ, ան կը հրաւիրուի տեղական կոմիտէի մէջ, բայց ժողովին նըստակեաց պաշտօնը չէր բաւականացներ անոր. վերջին անգամ ընկերացաւ Մ.-ի գծով ջարդուող խմբին հետ, մասնակցելով փոքրիկ ընդհարման մը։

Անցեալ 1903 թւին Հ. Յ. Դաշնակցութեան ընդհանուր ժողովի հրաւիրագրի վրայ՝ տեղական գործիչներու կողմէն ընտրուեցաւ իբր պատգամաւոր։ Ու ահա այս անգամ երբ կը վերադառնար երկիր՝ իր ընկերները գրկելու բուռն տենչով, երբ Ընդհանուր ժողովի արծարծած բոլոր հարցերին մասնակից ու գիտակ՝ զինակիր խմբի հետ մտաւ երկիր, Վանէն միայն 2-3 ժամ հեռու, զոհ գնաց անգութ գնդակին՝ 25 տարեկան հասակին մէջ։

Իր ծննդավայրի նորահաս երիտասարդութիւնը թող նայէ, երկար նայէ անոր դէմքին ու վրէժի և զայրոյթի վառ զգացումի հետ սնուցանէ նոյնպէս իր սրտի մէջ անբիծ, զոհաբերուող ու վեհ գաղափարներ։

Ցարգո՛նք յիշատակիդ, սիրելի ընկեր. լեռան գլուխը միայնակ հանգչած քու շիրիմդ, թող ծննդավայրիդ նորահաս երիտասարդութեան համար ոգեւորութեան աղբիւր դառնայ։

### ՆԵՐՍԷՍ ԴԱՒԹԵԱՆ

Ծնած 1861-ին Գողթանի Հանդամէջ գիւղում, սկզբնական կրթութիւնը Ագուլիս, միջնակարգը Ներսիսեան դպրոցում, ուսուցիչ Վերին-Ագուլիս, Նուխի, Գանձակ. դպրոցների փակումից յետոյ՝ պաշտօնեայ Բագւի առեւտրական մի տան մէջ և ապա մասնակից արդիւնաբերական անկախ ձեռնարկների, ուր և գտաւ նրան վաղահաս մահը 1903-ի վերջին — ահա նրա կեանքի համեստ կմախքը։

Այդ համեստ կմախքը, սակայն, ունեցաւ գովելի պարգարանքներ.—կողմնակից ազատ ու նոր գաղափարների, երիտասարդ Դաւթեան այդ գաղափարների տարածման նուիրեց իր երիտասարդ ուժերը թէ ուսուցչական ասպարիզում, թէ իբրև թղթակցող և թէ այն ժամանակ, երբ նա էլ շատերի հետ միասին, միլիօնների աշխարհում իր ապրուստն էր որոնում։ Կողմնակից հայկական յեղափոխական գործին, նա՝ իբրև Դաշնակցական տեղա-

կամ խմբերի ցնդած՝ անկարգ քարուքանդ և տարածում էր յեղափոխական միտքը — Նրա ձեռքի տակ շատ պատանիներ կ անկարգեցններ անցան նրա ջանքերով շատ խմբեր կազմւեցին և շատ նպատակներ եղան Թիւրքահայկական գաւառին: Այդ օրինակ գործունէութեան պատճառով 1895 թւին ենթարկւեց խուզարկութեան և բանտարկւեց 5 ամսով. սակայն այդ պատիժը չյուսահատեցրեց նրան..

Ցաւալիաբար ծանր հիւանդութեան հարւածը վերջին տարիները կտրեց նրա կազմւածքն ու կայանը և նա մարեց՝ չկատարած կեանք այն աշխատանքին որին ընդունակ էր իր հոյակապներով:

# ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Մեզ տեղեկացնում են արժանահաւատ աղբիւրից, որ ֆրանսիական կառավարութիւնը որոշել է առաջարկել 1895 թւի Մայիսեան ռեֆորմների ծրագիրը Հայաստանի համար, որը ինչպէս յայտնի է՝ պաշտօնապէս ընդունւած էր երեք մեծ պետութիւնների Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից:

*

Հայկական ռեֆորմների խնդրի մասին Կ. Պոլսից հեռագրում են Հեռուեթայ

Կ. Պոլիս, 14 յուլիսի

„Ֆրանսիական կառավարութեան նախաձեռնութեամբ, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները ռեֆորմների մի ծրագիր կազմեցին Անատոլիայի այն վիլայէթների համար, որոնք բնակեցրւած են հայերով: Ծրագիրը յանձնւեց Բ. Դռան ռուսաց դեսպանի միջոցով“:

*

Գերմանական մի քանի թերթերում հրատարակւեց հետեւեալ հեռագիրը, գրւած Կ. Պոլսից՝ յուլիսի 7-ին.

„Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները ձեռնարկել են պահանջել Բ. Դռնից, որ նա մտցնէ հինգ հայաբնակ գաւառներում միենոյն ռեֆորմները, ինչ որ և Մակեդոնիայում:“

*

Յուլիսի 7-ին, Պարիզի քաղաքային գլխաւոր խորհրդի նիստում, ընթացիկ հարցերի աւարտումից յետոյ, պ. Կօլլի խօսք խնդրեց՝ Կարմիր սուլթանի ոճրագործութիւնների դէմ բողոքելու համար.

„Ամենուրեք — ասաց նա — թալան, սպանութիւն, աւերմունք. շաբաթ չէ անցնում, որ գիւղ չ'աւերւէր, կրակի չմատնւէր: Եւ դրա հետ միասին՝ անվերջ խարերայութիւններ և կեղծ լուրեր, որ ամեն օր հրապարակ է գցւում օսմանեան դեսպանատան կողմից՝ եւրոպական հասարակաց կարծիքը քնեցնելու նպատակով: Կատարւած չարագործութիւնների ջախջախիչ փաստերի դէմ այդ դեսպանատունը դուրս է բերում լոկ կեղծ հերքումներ: Այդօրինակ պայմաններում քաղաքակիրթ ազգերը հրամայական պարտականութիւն ունեն՝ եռանդագին բողոքելու և միջոցներ ձեռք առնելու, որպէսզի այդ յանդուգն անպատժութեան վերջ տրւի“:

Հանոտօրի գեղեցիկ ճառից յետոյ՝ առաջարկւեց հետեւեալ բանաձեւը.

„Գլխաւոր խորհուրդը ցանկութիւն է յայտնում, որ հանրապետական կառավարութիւնը, հաւատարիմ Թայլերին պաշտպանելու իր աւանդութեան, անմիջապէս ձեռնարկէ այն միջոցների, որոնք անհրաժեշտաբար բխում են Հայաստանի արդի կացութիւնից, նպատակ ունենալով կարելւոյն չափ վերջ տալու այս հրէշաւոր աղէտին, որը անարգանք է ամբողջ մարդկութեան համար“:

Ֆրանսիական մայրաքաղաքի գլխաւոր խորհուրդը այդ բանաձեւը ընդունեց միաձայն ոգեւորութեամբ:

*

Մենք ստացանք ռուս-թիւրքական սահմանագլխից մի գաղտնի հեռագրի պատճէնը, որ տպագրում ենք ամբողջութեամբ, իբրև մի պաշտօնագիր, հեռագիրը ցոյց է [illegible] կողմից:

ՀԵՌԱԳԻՐ [illegible]
Nº 28

„Հաղորդում եմ, որ յունիսի 7-ի առաւօտեան, թիւրքիայում, Կարաուրգանից եօթ վերստ հեռաւորութեան վրայ, Խօրասանում դիրքի մօտ գտնւող հին ամրութիւնների մէջ երեւան եկաւ հայկական մի խումբ, որը դիմաւորեց թիւրքաց զօրքին հրացանաձգութեամբ. Հետեւակ զօրքի մի քանի վաշտեր, որոնք արագօրէն վրայ հասան, շրջապատեցին դիրքը: Մինչեւ տեղային հրացանաձգութիւն, որ շարունակւեց մի ամբողջ օր: Թիւրք զօրքերը առաջարկում էին անձնատուր լինել, խումբը մերժում էր: Երեկոյեան զօրքերը սկսեցին յարձակում: Խումբը ընդունեց հարւածը, թափելով ձեռքի դինամիտային ռումբեր. կատարեալ ճակատամարտը վերջացաւ խմբի կատարեալ ջնջումով. պատուածներ չկան: Հայ դիակներ 54 են, ձիեր՝ 27: Թիւրքերից սպանւած են վաշտի հրամանատարը. վիրաւորւած է զօրագնդի առաջնորդը. զինւորներից սպանւած են 115: Ենթադրում են, որ այդ վերջին թիւը քչացրւած է: Շրջանի մէջ խմբի անցքի ոչ մի հետք չկայ: Թիւրքերը ենթադրում են, որ նա անցել է ֆանամ Զօրուի և Մէջինգերտի մէջտեղից, ուր մինչև կէս գիշեր ղարկում էին ահակոչնակը տաճկական պահականոցներում, որի միջոցին վիրաւորւեց մի թիւրք զինւոր: Թէև թիւրքերը համարեա ամեն գիշեր հաւար են կանչում. բայց տարածւած լուրերի հիմքերը խախուտ են. Ամսի 7-ին հաւարը հնչում էր բոլոր թիւրքական պահականոցներում, որոնք զետեղւած են սահմանի ողորկապատ գծի վրայ, որով և բացատրւում է զինւորի պատահական վիրաւորւելը“:

Ստորագրած է Ռօմանենկօ

*

Ֆինլանդիան կանգնած է նոր փորձանքի դիմաց: Եւգէնի Շաումանի ձեռքով սպանւած Բոբրիկովի փոխարէն ցարական կառավարութիւնը երկրի կառավարութիւնը յանձնեց Օբօլենսկուն, Նիկոլայ II-ի հրապարակական լիազօրութեամբ՝ շարունակելու ռուսացման գործը նոյն համառութեամբ: Դա մի նոր վիրաւորանք է՝ ուղղած վշտահար երկրին: Պլեւէեան այդ վիրաւորանքը չի ծնի արդեօք մի նոր Շաուման, իբրև մարմնացում ֆինական վրէժխնդրութեան:

*

Անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ Լանդըսդաուն մի նամակով, ուղղւած անգլօ-հայկական ընկերութեան նախագահ Ստեփէնսընին, յայտնում է, թէ ինքը առաջարկել է, որ „Վանի անգլիական փոխ-հիւպատոսը ընկերանայ այն թուրք վաշտերին, որոնք բար-

ձրանալու են Սասուն՝ ապստամբների դէմ գործելու համար“: Այդ նպատակով կապիտան Տըրրլ արդէն հասել է Մուշ յունիսի 6/19-ին:

Մուշից յունիս 16/29-ից գրուած մի նամակով մեզ հաղորդում են, որ յիշեալ Վանի անգլիական հիւպատոսը հասաւ Մուշ, և նոյն ամսի 10/23-ին բարձրացաւ Սասուն, որտեղից դեռ չէ վերադարձել

Համաձայն Տըրրլի տեղեկութեան, որ նա ուղարկել է Լոնդոն, սպանուած հայերի թիւը 1400-1500 է:

*

„Դրօշակի“ խմբագրութիւնը, յունիսի 29-ին ստացել Լոնդոնի Հայասէրների միտինգին հետեւեալ հեռագիրը՝ ուղղած նրա նախագահ Ջ. Է մ ս Բ ր ա յ ս ի հասցէին.

„Ողջունում ենք յարգանքով Միջազգային ժողովը, գումարած ներկայ պատեհ րոպէին: Սասունի մէջ տեղի ունեցած վերջին արիւնալից դէպքերը իրաւունք են տալիս յուսալու, որ ներկայ համախմբումը կունենայ յատուկ կարևորութիւն և կ'որոնէ միջոցներ՝ վերջ տալու բնաջնջման գործին, որին ձեռնարկել է Մեծ-Մարդասպանը Հայաստանի մէջ: Սիրում ենք յուսալ, որ վերջին ծայր ողբերգական այս պայմաններում՝ դուք կը գտնէք գործնական և շուտափոյթ միջոցներ՝ ստիպելու դիպլօմատիային, դուրս գալ իր յանցաւոր անգործութիւնից և վճռական մի քայլ անել: Եւ եթէ այդ անհնար է, կարծում ենք, որ այդ դէպքում ամէն մի զգայուն մարդու պարտքը պիտի լինի աջակցել այն տարրերին, որոնք ձգտում են զինել տանջուող ժողովուրդը՝ նրա կեանքի և պատւի տարրական իրաւունքները պաշտպանելու համար“:

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

## ՏԵՌՈՐ

Զրաբերդի կենտրոնական կոմիտէի որոշումով տեռորի ենթարկուեց Ծղնեցի յայտնի մատնիչ Ադըլ: Սպանութեան միջոցին՝ մեծ որդին կամենալով պաշտպանել հօրը, նոյնպէս գնդակահար եղաւ: Դէպքը ազդու տպաւորութիւն թողեց գիւղական ժողովրդի վրայ, որը անէծքի ու նախատինքի երգեր է հիւսել Ադըլի, իր գերդաստանի ու ամբողջ սերնդի վրայ: Այդ տէռորը միաժամանակ սոսկում ազդեց շրջանի ռուս կաշառակեր պաշտօնեաների վրայ, որոնք մինչև իսկ քաղաք չեն գալիս, երկիւղ կրելով յեղափոխական գնդակից: Տեռօրիստները ազատ են:

ԶՐԱԲԵՐԴԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

# ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ** ստացած է՝

*Ա ն գ լ ի ա.* — Լոնդոնից՝ Յակոբ 1 շիլ., Պետօ 4 շիլ. 6 քէն., Րաֆֆի 2 շիլ. 6 քէն., Արազ 1 շիլ., Փ. 2 շիլ. 6 քէն., X. 2 շիլ. 6 քէն., Ոմն 3 անգլիական ոսկի, 9 շիլ. 6 քէն.: Ալպ. կոմիտէից 87 ֆր. 50 ս.: Գումար 8 ոսկի անգլ., 13 շիլ., 6 քէննի:

*Ռ ո ւ մ ա ն ի ա.* — Բրայիլայից՝ Խ. աղա Պապատաղցի, 5 ֆր., Մել. Զավ. 5, Մով. աղա 5, Սեր. աղա 5, Հալքաս 5, Ս. Բօլ. Միս. Դան. 2, Մարկ. Օհան. 1, Յար. Կազ. 2, Պետ. Ար. 60, Փօքշանից՝ Բալէկ 28 ֆրանք:

Բրայիլայից՝ Սեւ գլխարկ 10 ֆրանք, Վրէժխնդիր 30, Առիւծ 10, Կորիւն 10: Գումար 183 ֆրանք:

*Ե գ ի պ տ ո ս.* — Գահիրէի Կ-ից 1,148 ֆրանք:

*Ս ո ւ դ ա ն (Աֆրիկա).* Խարտում քաղաքից՝ 30 անգլիական ոսկի հանգանակուած ի նպաստ երկրի կռուողների. Նուիրատուներն են՝ Օ. Տ. 200 եգիպտական դահեկան, Սեղրակ Ճորճ 500, Խ. 750, Փայլակ 300, Կ. Ա. 100, Տ. Գասպարեան 97. 20, Լուսաւոր 100, Պ. Գուշնձեան 100, Յ. Ստեփանեան 50, Յարդին 20, Գ. Իշխանեան 100, Յովսէփ Ա. 100, Մ. Ա. 30, Ա. Իզմիրլեան 210 դահ.:

*Բ ո ւ լ ղ ա ր ի ա.* — Օժկաղօն ք-ից՝ Պ. Կարապ. 5 ֆրանք:

*Շ վ է յ ց ա ր ի ա.* — Բ. գիւղից՝ հայասէր շվէյցարուհուց 10 ֆր.:

*Ռ ո ւ ս ա ս տ ա ն.* — Նիկօլ ք-ից՝ Մ.-ից 3 ռուբլի:

Համագումար 2328 ֆրանք, 50 սանտիմ.

**ՈՍԿԱՆԱՊԱՏԻ** տեղական կոմիտէն՝

1904 թ. փետրւար ամսի 28-ից մինչեւ մայիս 13. —

| | | | № | ռուբլի |
|---|---|---|---|---|
| Մահ կամ Ազատութիւն | խումբ | անդորր. | 25 | 100, |
| Խարոյզ | „ | „ | 26 | 50, |
| Թաքաւխայից | | „ | 27 | 150, |
| Հին Մաքսի հին ծառայողներից | | „ | 28 | 50, |
| Դալի-Բաբա | խումբ | „ | 29 | 13, |
| Արշակունի | „ | „ | 30 | 25, |
| Ծախուած պատկերներից | | „ | 31 | 7. 40, |
| Հրատ | „ | „ | 32 | 14. 70, |
| Կրակ | „ | „ | 33 | 33. 50, |
| Մահ կամ Ազատութիւն | „ | „ | 34 | 150, |
| Դերոյեան | „ | „ | 35 | 22, |
| Վրէժխնդիր | „ | „ | 36 | 11, |
| Յորդանան | „ | „ | 37 | 20, |
| Քանքար | „ | „ | 38 | 8. 50, |
| Մի խումբ ծառայողներից | | „ | 39 | 18, |
| Շղթայ միութիւնից | | „ | 40 | 150, |
| Մահ կամ Ազատութիւն | „ | „ | 41 | 200, |
| Կար-յից | | „ | 42 | 34. 70, |
| Դերոյեան | „ | „ | 43 | 112, |
| Ս. Փ.-ից | | „ | 44 | 10, |
| Օ. Ն. Ս.-եանից | | „ | 45 | 10, |
| Նոկ-ից | | „ | 46 | 3, |
| Մ. Տ.-ից | | „ | 47 | 10, |
| Գրականական ֆօնդից | | „ | 48 | 50, |
| Վիճակախաղից Խառատի միջոցով | | „ | 49 | 10, |
| Ն. Ա-ից | | „ | 50 | 2. 50, |
| Սարսափ | խումբ | „ | 1 | 27, |
| Դալի-Բաբա | „ | „ | 3 | 15, |
| Դալի-Բաբա | „ | „ | 4 | 15, |
| Պետարլէնի | „ | „ | 5 | 44, |
| Զատկւայ քէֆից | | „ | 6 | 10, |

Կը շարունակուի

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ** կեդր. կոմիտէն՝

1903 թւի նոյեմբերէն մինչեւ 1904 ապրիլ. —

*Ռ շ տ ո ւ ն ի ք.* — Զապուզօն Վահրիչ 208 ղահեկան, Բաղդօ 100, Խաչօ 25, Կակոս 80, Բժէ 15, Բաղդօ 80, Վահրիճ 216: *Ծ ո վ ա լ ա ն ջ.* — Զարմայր 60, Բաղդօ 540, Ռէս 108, Խէրանեան 108, Բերդազեղի Ռէսից 516, Բերդազեղի Գօկտից 108, Բերդազեղի Երէցից 1080, Աւէտ 1080, Սամուէլ 532, Արծիւ խմբ. 10, Բարեքեր գիւղի Քաջարի խմբ. 33, Արածանի խ. 17. 20, Խոսրովա գեղի Ծաղիկ խ. 40, Բարեքեր գեղի Զրահաւոր խ. 40, Լեռնաձոր գեղի Վաղարշ խ. 75, Տորոս գեղի Ջալլատ խ. 30, Փշոտ գեղի Բազրատ խ. 25, Քրիճակ գեղի Շաթըր խ. 20, Կուռղ խ. 26. 10, Վարդից 40, Գետափ գեղից 10, Խիւրակ գեղից 15, Սֆինքս գեղի Արա խ. 20, Արածանի խ. 15, Մահ գեղի Քնար խ. 20, Արսէնից 40, Տիգրանից գեղի Զօպանօղլու Պօղոս եղբօրից 10, Յովհաննէսից 80, Ջալլատ խ. 40, Արծիւից 10, Վերին գեղի Գուրգէն խ. 10 դահ.: Գումար 5482 դահեկան 30 փարա:

**ԺԼԱՏ** կեդր. կոմիտէ՝

Առ 15 յունւար 1904 թ. — Արշակի պսակից 10 ռուբլի, Զօղակից քելեխի փոխարէն 25, Կարօ խմբ. 60, Արշալոյս խմբ. 50, Վրէժ խմբ. 13. 25, Տիգրանիկի մկրտութիւնից 5, Կրէտացիից 30, Նորահին կոմիտէից 300, Վրէժ խմբ. 70, Կարօ խմբ 60, Քեռի խմբ. 50, Արշալոյս խմբ. 50, Լուսաստղից 215, Մարդուկէսից ամսավճարներ 50, Բուժարան կոմիտէից 80. 30, Չէրքէզից 25, Քեռի խ. 28. 31, Կարօ խ. 40 ռ.: Ընդամէնը 1161 ռ. 76 կոպէկ:

**ԱԼԷՔՍԱՆԴՐԻՈՅ** կոմիտէն՝

Յունաստանի „Կիլիկիայ“ խումբի ըրած ի նպաստ Սասնոյ հանգանակութենէն. — Ե. Կ. 40 դրախմի, Գ. Բ., Պ. Տ., Մ. Ա. 35-ական, Սուր Հարւածեան, Զ. Մ., Յ. Գ., Պ. Տ. Սմբատ, Ա.

